



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



38
7-34



19921-59

ՔԱՂԿԵԴՈՆԵԱՆ ԺՈՂՈՎ

ԵԻ



($\frac{1007}{32296}$)

Է Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

W. S. 1902



(Հանեալ 'ի «Բանասէր» հանդիսէ)

10058



Պ Ա Ր Ի Ս
1902

6766

18.07.2013

1183

Արարիցյան 6 Առաքիլաւ
Քաղկեդոնեան խորհուրդի 2-րդ կազմակերպչական
Եկեղեցի

Փայտի 1922թ

Handwritten notes in purple ink, possibly a signature or initials.

280
1059-ԲԱ
28
11-34

Պարոնյան
Առաքիլաւ



ՔԱՂԿԵԴՈՆԵԱՆ ԺՈՂՈՎ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ



Այլ է համարվում Յիշխանի

Մխիթարեան Յարգ. Հարք Վենետիոյ իրենց հաստատութեան Երկ-
հարիւրամեկի հանդիսին առթիւ, իբր միայուն գրաւոր յիշատակ ի պա-
տիւ իւրեանց մեծի Հիմնադրին, նորա վարուց եւ գործոց պատմութիւնը
հրատարակեցին (1): Գործ արդարեւ արժանի ընթերցման, ուր նաեւ
զայս մեծագոյն բարոյական խրատն կ'ընդունիմք, թէ մեծախոն միտք
մը՝ հսկայ դադափարաւ մը ըմբռնեալ, ինչպէս կարող է հասնիլ իւր բար-
ձրը նպատակին, եթէ ունի յինքեան նաեւ զօրաւոր կամք եւ անվատե-
լի հաստատամտութիւն: Այլ այս չէ որ պիտի պատճառ ըլլայ մեր այս
բանասիրական քննութեան. այլ ուրիշ մասնական, եւ նշանաւորագոյն
եւս խնդիր մը յառաջ կը բերէ մատեանդ, յորմէ զանց չէր կրնար ընել,
— Քաղկեդոնեան Ժողովոյն խնդիրը, որ ոչ միայն այդ Մեծ Անձին կե-
նաց եւ գործոյն հետ սերտիւ կապուած է, այլ նաեւ ազգային կենաց
հետ, սկսեալ ի հին դարուց մինչեւ ցնեակայս: Բայց այս ծանօթ խնդի-
րը՝ բաց ի այդ ազգային խնդիր մը դարձած ըլլալէն, նաեւ իւր խոր-
հրդաւորութեամբն է նշանաւոր. գաղանիք մի է թէ ի'նչպէս ծնունդ
առած եւ մտած է ազգին մէջ, թէ ի'նչ կապակցութիւն ունի նորա կը-
րօնական համոզմանց հետ, եւ ի'նչ է այն անբացատրելի պարագայն, որ
ազգն միշտ եւ յարատեւ հակառակութիւն մը ունեցած է այդ Ժողովոյն
դէմ, մինչեւ նաեւ հակասութեանց երեւոյթ տալ, եւ անհամաձայնու-
թիւն մը գողցեալ գոյացունել անկասկածելի իրականութեանց հետ: Այս
մտքերը կը հետաքրքրէ անշուշտ, երբ այդ խնդրոյն նկատմամբ կար-
գալու ըլլայ այն տխուր նկարագիրը, զոր ընել ստիպուած է նաեւ մեր
անանուն կենսագիրը: Նա սակայն զանց չընէր առաջին անգամ որ կը
հարկադրի զայն յիշատակել, այն առթին՝ որ Աւետիք վարդապետ, կար-

(1) Վարդ Մխիթարայ Արքայի. սպ. Վենետիկ 1901. 8 ծլ. պատկե-
րազարդ:

նոյ առաջնորդը, խստիւ կը վարուէր այն անհատից դէմ, որք այդ աղղա-
յին հին աւանդական ոգւոյն հակառակ շարժելով, իբր անջատեալ մար-
մին կ'ուզէին երեւնալ յաղգին, յորմէ եւ անհաճոյ չփոթք եւ խոռվ
կը ծնանէին, — այդ առթին, կ'ըսեմք, նաեւ Պատմիչն զմեր խորհրդա-
ծուծիւն մը ընել հետեւեալ խօսքերով, զայն թէ եւ կեղծեօք Մխիթարա
(վիշտասանամեայ պատանոյ մը) բերանը դնելով. «Չուզելով Մխիթար
«խառնել ինքզինքը այդ կուլեներուն մէջ, Բասենոյ վանքը քաշուած էր
«ուր հանդարտ գլխով կը խորհրդածէր եղածներուն վրայ, եւ չէր կրնալ
«զարմանքը բռնել, մտածելով թէ ի'նչպէս կը հալածէին ի Քրիստոս
«Յրկու բնուրթիւն դաւանողները, քանի որ իրենք եւս կը դաւանէին
«զՔրիստոս ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ. բան մը՝ որ յիրաւ
«միշտ զարմանալի եղած է, եւ որ ուրիշ կերպով չի բացատրուիր, բայ
«թիւրիմացութեան կամ սոքիտութեան ընծայելով անոր շարժառիթը
«ուրիշ մեծագոյն բան մը չըսելու համար»: Կը յաւելու դարձեալ. «Կ'ափ
«չէր նա Աւետիքի եւ անոր համախոհից վրայ, թէ ի'նչպէս իրենք զի
«թրենք հեանող եւ որդի կը կոչէին այն սուրբ Հարց, որոնց վարդա-
«պետութեանց դէմ կը մաքառէին յայտնապէս»:

Շատ ճիշդ եւ պարզ եւ ամփոփ ձեւոյն մէջ ներկայացուցած է մե
հատուածդ խնդրոյն էութիւնը ուր յայտնի կը տեսնուի արդարեւ ին
կատրօն մը: Այդ հակասութիւնն, ոչ թէ միայն այժմեան բանաստ
րաց, այլ եւ այլոց բազմաց ի վաղուց անտի, միշտ զարմանալի է
միշտ անբացատրելի մնացած է, եւ ինչպէս մեր Պատմիչն իւր Բասեն
բանական զննութեամբ ոչ ինչ այլ, բայց սոքիտութիւն կամ թիւրի
մացութիւն այնմ պատճառ կը գտնէ, զնոյն գտած են եւ ամեն անոնք
որոք լղած են զայն բարեկամ ներողամտութեամբ մը գտել, — սկսեա
ի Մխիթար Կաթողիկոսէ ի ԺԴ դարու (Պասախասնագիր առ Բենեդիկտ
ԺԲ Պապ), մինչեւ ցՄխիթարեան Հարս վենետիկոյ, որոց պարագլուխ
այս խնդրոյն մէջ, եղած է մեր Պատմահայրն Չամչեան: Սոքա կը մեկն
թէ այդ ժողովոյն գումարման ժամանակ Հայք իրենց առանին պատ
րազմաւ զբաղեալ ընդդէմ Պարսկական-Մոգական յարձակման, կար
չեղան ներկայ գտնուիլ անդ. տարիներ վերջը երբ փոքր ինչ հանդա
տութիւն գտան, Ասորի խարեբայք ի Դիոսկորեանց սպրդելով ի Հայ
ստան, այլ ընդ այլոյ տեղեկութիւնս բերին, եւ մտքերը պղտորեց
ընդդէմ ուղղադաւան ժողովոյն, կարծել տալով թէ Յրկու բնուրթեան սխ
դաւանութիւնն ընդունեցաւ նա ըստ 'Նեստորի' հակառակ որոշմա
Նիեսոսեան սուրբ ժողովոյն (Պատմ. Հյ. Բ. 223 եւն.). Սոյն պարագա
վրայ կ'աւելցունեն այլ բանասէր-քննադատք ուրիշ պարագայ մը եւս
զայդ կարծիս զօրացունելու մտօք, թէ՛ եւ Հայք որ ցրտացեալ է
արդէն ի Յունաց, որք զիրենք անօգնական թողուցին իրենց նեղ օ
րուն մէջ, աւելի հեշտեալ զիւրալուրդանուեցան այս ստայօդ տեղեկ

Հոռոշ

թեանց, ուղեւով կրօնական թշնամանօք անոնց անբարեկամութեանը
փոխարինել: Այս է թիւրիմացութեան մեկնութիւնն:

Se non è vero, è ben trovato! Առ ի չգոյէ լաւագունին, այս
մեկնութիւնս ստեղծուած է, բայց ոչ բնաւ ընդունելի ողջամիտ մտաց.
բաւական է փոքր ուշադրութիւն մը նորա տկար կողմերը տեսնելու: Ան-
ընդունելի է նախ, որ այդպիսի մեծ կրօնական գործ մը՝ Հայոց, որ վեր-
ջին Արեւելից՝ Չինաց աշխարհին կողմերը չէին գտնուեր, իսպառ ան-
ծանօթ մնացած ըլլայ, եւ տարիներ վերջը (ըստ կարծողացդ՝ 50-60 տա-
րի առ Բարգինիւ) լուրը հասած ըլլայ իրենց, եւ այն՝ անծանօթ կաս-
կածելի Ասորիներու, կամ ինչպէս Աբուլֆարաջ (ԺԲ դար) կ'աւանդէ,
Շմուէլ անուն մէկու մը ձեռօք, եւ Հայք ալ անմիջապէս հաւատացած
անոնց խօսքերուն կոյր զկուրայն, — մինչդեռ այլուստ անժխտելի հա-
ւանականութիւն մը ունիմք, որ ըստ սովորութեան՝ նաեւ առ Հայս հը-
րաւէր եկած ըլլալու է առ ժողովն, եւ եթէ եղած եւս չըլլար, անհնարին
էր որ լսած չըլլային գոնէ Յունական բաժնին ազգայիններէն: — Իսկ
միւս յաւելուածն թէ կամովին եւ հակառակութեան ոգւով ընդդէմ Յու-
նաց՝ շարժած ըլլան մեր նախահարք, քան զվերինն անտեղի է. զի
ի'նչպէս միաբանեցունել այդպիսի ոգի մը՝ մեր երանելի Հայրապետաց
այն բարձր եւ մեծահաւատ ոգւոյն հետ, որ վսեմ կերպիւ կը փայլի
իրենց առ Յազկերտ ուղղած հրաշալի եւ արիասիրտ պատասխանոյն
մէջ, յորում յայտնի կը քարոզեն որ աշխարհի շահերն ոչինչ են՝ իրենց
երկնային յուսոյն եւ ճշմարիտ հաւատոյն առջեւ, — եւ այդ Հայրապե-
տաց շատերն դեռ կենդանի էին, երբ Քաղկեդոնի ժողովոյն լուրն կը
հասնէր ի Հայաստան. — եւ կամ նոյնպէս, ի'նչպէս համաձայնեցունել
զնոյն ատելութեան ոգին՝ նոյն իսկ յաշխարհական գասէն՝ նախարարաց
զդաստ եւ կրօնասէր հաւատոց հետ, ցայն վայր հասած, որ, ինչպէս կը
պատմէ ժամանակակից պատմիչն Նդիշէ, ստոյգ գիտնալով իսկ որ Յազ-
կերտ իրենց դէմ դաւաճանութիւն կը նիւթէ զիրենք ի Դուռն կոչելով,
իրենք՝ աստուածային պատուիրանը մեզ «հնազանդ լինել տերանց մար-
մնաւորաց» կը հրամայէ ըսելով, «բարեմտութեամբ» եւ «անտրտում
խնդութեամբ» փութացան հրամանին: 'Ներելի' է ընդունիլ մեզ այժմ,
որ այդ աստուածերկիւղ անձինք յանձն առած ըլլան կամովին եւ գիտու-
թեամբ՝ հաւատոյ հիմնական վարդապետութիւն մը խախտել, ճշմարտու-
թիւն մը խեղաթիւրել եւ աստուածային սրբագոյն խորհրդոց մէջ խառ-
նել աշխարհական ոգի, արատաւորելով իրենց խիղճը, վաճառել իրենց
ամենափափուկ գանձը՝ ի գին հակառակութեան եւ ատելութեան, եւ
վերջապէս պարտաւոր մնալ յաւիտեան իրենց ապագայ սերնդոց մոլո-
րութեանն: Եթէ այդքան ատելութիւն բունեալ էր այդ երանելեաց օրը-
տին մէջ, գոնէ «Չկատարելագոյնն զնոսին ատեսցուք զատելութիւնն»
ըսելով, ըստ կորովի լեզուին մեր Յովհաննու Իմաստասիրին, Նւախբա-

կանութեան դրօշը բանային համարձակ, քան թէ մեզմեխ խորհրդով մը նզովէին զԲաղկեղտն արտաքուստ, եւ ի ներքուստ անոր վարդապետութիւնն ընդունէին, անխմաստ եւ անհամ հակասութեան մը մէջ դնելով զիբենք: — Կ՞ո՞չ քան զայս մեծագոյն անհաւանականութիւն, որում ոչ ժամանակագրութիւնն կը յարմարի եւ ոչ բարոյական անկարելիութիւնն: — Այս նշանաւոր եւ կարեւոր խնդրոյն գաղտնեաց ուրեմն ջանամք հասու ըլլալ՝ ոչ մեր ենթադրութիւններով, այլ թողով որ պատմութիւնն ինքն խօսի փոխանակ մեր, եւ յետոյ յարեմք մեր խորհրդածութիւններն, զորս նա մեզ թոյլ պիտի տայ ընել անշուշտ:

• •

Ներուի մեզ փոքր ինչ ի վերուստ սկիզբն տալ մեր հետազօտութեանց: — Նախկին քրիստոնէութիւնը չյապաղեց իւր հաւատարեաց օրինագիրքն (Code) ունենալ: Չկնի Աւետարանական մատենից՝ Հանգանակ հաւատոյ (Symbole) կոչուածներն են, ուր համառօտ եւ ամփոփ ձեւով ի գիր առնուած են քրիստոնէական կրօնից այն հիմնական վարդապետութիւնները, զոր պարտի ամեն ուղղափառ քրիստոնէայ դաւանել Սկիզբն առած են սոքա երեխայից (մկրտելեաց) պատճառաւ, որք երկմկրտութեան գային, պարտաւոր էին նախ հաւատոյ դաւանութիւն տալ ի սկզբն այդ խոստովանութիւնք անգիր էին, եւ կը կատարուէին հարցմամբք եւ պատասխանեօք, (եւ այս է մինչեւ ցարդ նաեւ ի մեր Մաշտոցըս տեսնուած Հաւատա՞նն ենն.), եւ էին միայն քանի մը զլիսաւորագոյն կէտերուն վրայ. այն է՝ հաւատալ յԱմենասուրբ Երրորդութիւն յորոյ անուն պիտի մկրտուէին (Մատթ. ԻԸ, 19), ի Մարդեղութիւն Քրիստոսի եւ ի տնօրինականսն, եւս եւ ի Մկրտութեանն խորհուրդ, զո պիտի ընդունէին (եւ այդ է ցարդ պահուածն ի Հաւատամքին. «Հաւատամք... ի մկրտութիւն ապաշխարութեան» ենն.): Սակայն ոչ այդ բնութեանցին եւ ոչ պարզութիւնն՝ ընդ երկար մնացին: Քրիստոնէութեան սահմանք երբ ընդարձակեցան հետզհետէ, եւ մանաւանդ զկնի Կոստանդիանու պարգեւած ազատութեան, Քրիստոսի «տգէտ եւ առանց դպրութեան» հօտին մէջ՝ սկսան նաեւ «իմաստունքն ըստ մարմնոյ» խոսնույտնական իմաստասիրութեամբ սնեալ մտքեր, բերին մուծին տեն նախկին քրիստոնէական հաւատոյ ամենապարզ աստուածաբանութիւն, Պրատոնական բնազանցական տեսութեանց պատշաճեցունել: Ընդունեցաւ արդարեւ ինչ ինչ կէտեր, սակայն չաւելցուցին հին պարզամիտ հաւատք վրայ առաւելութիւն մը. նա ընդհակառակն՝ մուտ տուին կերպ կերպ ազանդներու եւ օտարուսուն վարդապետութեանց, եկեղեցւոյ այս նվազակն՝ հարկադրեց որ դաւանութիւնք աւելի ընդարձակուին, աւել մանրամասնութեանց իջնեն, մանաւանդ երբ մկրտութեան մերձեցըն՝ ազանդէ մը կուգայր. իսկ ընդարձակուելովն՝ պէտք եղաւ որ

ի գիր առնուին անոնք՝ Հանգանակ կամ Կանոն հաւատոյ անուամբ, եւ հազորդուին նաեւ հաւատացելոց, զգուշանալու իրենց շուրջը թափառող ազանդներէն:

Այս յաւելուածք ոչ առանց խնամոց եւ ոչ առանց սկզբանց կը յօրինուէին. հիմնեալ էին այն աւանդութեանց վրայ, որ «Առաքելականք» կը կոչուէին, եւ որոց յիշատակութիւնը կը տեսնեմք ստէպ Պօղոսի թղթոց մէջ, մանաւանդ որք առ Տիմոթէոս գրուած: Երբ նոր ազանդոյ մը ծաւալումն կը տեսնուէր, իսկոյն տեղւոյն եպիսկոպոսունք եկեղեցական ժողով կը գումարէին. կը քննուէր անդ մոլորութիւնն, կը դատապարտուէր նզովիւք, եւ անոր դէմ, երբ հարկ տեսնուէր, ուղիւ վարդապետութեան ամփոփ բանաձեւ (formule) մը կը յօրինուէր, եւ մասն մը կը կաղմուէր այն Հանգանակին (1): Այսու՝ իւրաքանչիւր եկեղեցի իրեն յատուկ Հանգանակ մը կ'ունենար:

Երբ հասաւ Արիոսեան ազանդն, որ քան զնախորդսն աւելի ծաւալումն դտաւ եւ մեծ վէճեր յարոյց, հարկ եղաւ որ, առաջին անգամ ըլլալով, ժողովն ոչ տեղական ըլլայ, այլ ընդհանրական (տիեզերական), որ եւ խմբեցաւ ի Նիկիա (ի 325): Այս ժողովն զիւր խնդիրները լուծելէն ետեւ, եկեղեցեաց վարդապետական միութեան համար ընդհանրական Հանգանակ մը որոշեց, ոչ նոր յօրինելով, այլ արդէն յօրինուածներէն հատ մը, որ կատարելագոյն կը համարուէր, ընտրեց (2), եւ քանի մը յաւելուածներ ընելով, զլիսաւորագէս Առնիկոսիան (կամ ըստ մերում Հաւատամքին՝ Առնիկոսիան) բառն, յաւարան կցեց զիւր նզովից բանաձեւն ընդդէմ Արիոսականութեան, որ է «Իսկ որ ասենն»: Այս Հանգանակը որ Նիկիական կը կոչուի, վերջնական ձեւն առաւ երկրորդ Տիեզերական ժողովին ի Կոստանդնուպօլիս, յամին 381, որ նախորդին պէս՝ ինչ ինչ յաւելուածներ, զորս արդէն քանի մը եկեղեցիք ըրեր էին ընդդէմ Ապոլինարեանց եւ Հոդեմարտից՝ ընդունեցաւ եւ վաւերացուց, դարձեալ Նիկիական անունը պահելով, թէեւ երբեմն Նիկիա—Կոստանդնուպօլիսեան ալ կը կոչուի, բուն Նիկիականէն զանազանուելու համար: Իսկ երրորդ տիեզերականն որ յՆիքեսոս յամին 431, զայս Հանգանակն յետ դարձեալ վաւերացունելու, իւր Զ կանոնովն վճիռ արձակեց՝ մի այլ եւս նոր վարդապետութիւն մուծանել մէջը, բաւական համարելով

(1) Առ այն իմն կ'ակնարկէ ըսելն. «Մշակ առանց ամօթոյ, օւղիղ համառօտել զբանն ճշմարտութեան» (Բ Տիմոթ. Բ. 15):
 (2) Նիկիական Հանգանակին ընդհանուր ձեւն կը նկատուի, որով եւ իբր հնագոյն Հանգանակին մասն կը համարին ոմանք, այն հատուածոյն մէջ, զոր կ'ընթեռնուէր Պօղոսի առ Տիմոթէոս Ա թղթոյն մէջ (Կ. 15-16) «Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածապաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արգարացաւ հոգեով, յայտնեցաւ հրեշտակաց, քաղցրեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ աշխարհի, եւ վերացաւ փառօք»: — Բող. եւ Հոսմ. Ժ. 10. — Ա Կորնթ. Ժէ, 3-4. — Ա Տիմոթ. Զ, 20. — Բ Տիմոթ. Ա. 13-14:

անոր հաւատարեաց գլուխները, որք հարկաւոր էին քրիստոնէի մը դաւանել : Այս վճռոյն պատկառ կեցան հետագայ ժողովք (1), եւ ամեն ուղղափառ եկեղեցիք ընդունեցան զայն թէ յԱրեւելյս եւ թէ յԱրեւմուտս ինչ ինչ տարբերութեամբ ի մանրամասնութիւնս, բայց ոչ յեականսն : — ասոնցմէ է 'սաւե մեր Հաւատամքն (2) : — Այս հանդանակն եւս, նախորդաց պէս ի պէտս մկրտելեաց էր, բայց սովորութիւն եղաւ երբեմն երբեմն ընթեռնուլ զայն ի լուր հաւատացելոց, եւ Պետրոս Անտիոքայ պատրիարքն՝ Կնափեցի (Թափիչ) անուանեալն (471-488)՝ գեղեցիկ խորհրդո Պատարագամատուցին մէջ մտուց զայն, որուն հետեւեցաւ եւ Տրմոթէոս պատրիարք ԿՊօլսի՝ զնոյն հրամայելով իւր թեմին յամին 511, ապա եւ Արեւմտեայք : — այսպէս եւ մերայինք, հաւանականաբար ոչ շատ յետոյ քան զԱսորիս, այս է ի վերջոյս և դարու (3) :

Հանգանակք հաւատոյ արգելք չեղան անհանդարտ մտքերու իրեն բանակեշտ (rationaliste) հետամտութիւններն դարձեալ շարունակելու իրենց հանձարը կը սրէին՝ աղանդաւոր վարդապետութիւն մը ջրել նա աղանդաւորութեամբ մը, որ յաճախ հակառակ ծայրայեղութեան մը դիմել էր : Այս դէմընդդէմ հակառակ ախոյեանք՝ երկու նշանաւոր զբարոյներն էին, Անտիոքայն եւ Աղեքսանդրիոյ, երկուքն ալ միանգամայն պատրիարքական աթոռներ : Տեղւոյս չէ հակառակութեանց պատմութիւնքնել մի առ մի : սակայն հարկ է որ, մեր ինչորոյն համար, կանգ առնուի ի նեստորիոս, պատրիարք ԿՊօլսի (428-431) : Աստ նոր երեւութիւնքն մը եւս կ'անցնին աստուածաբանական վէճք. նախորդ Արիոսական հակաճառութիւնք՝ որ Բանին կամ Որդւոյն Աստուծոյ ընդ Հօր համար

(1) Անլսողութիւն կը նկատեն այս վճռոյն դէմ Արեւելեայք, Սպանիացիք իւր երկու դար յետոյ, յամին 589, Տղեւտոյի ժողովով որոց հետեւեցան Փրանկաց եւ Գերմանաց եկեղեցիք, «եւ յՈրդւոյ» բռն աւելցուցին, որում ընդդէմ կեցան յԷ դարու Ագրիանոս Ա եւ Լեւ Գ պապերը, երբ մեծն Կարոյոս ընդունել կ'ուզէր տալ նաեւ Հռոմաց ցւոց եկեղեցւոյն : սակայն յետոյ Բենեդիկտոս Ը Պապն (1012-24) չկրցողով զիմադրել Հենրիկոս Բ կայսեր, եւ զիջաւ ընդունիլ : Սակայն գիտելի որ նախագոյն քան զԿոստանդնուպօլսի իսկ ժողովն, սրբոյն Եպիփանէս յառաջ բերած Հանգանակներէն մին (Խարխալս, ՃԻԱ) նմանօրինակ յւելուած մ'ունի այս ձեւով. «Որ ի Հօրէ կլանէ, եւ յՈրդւոյ առնու» որ անշուշտ քան զմիւսն աւելի Աւետարանական է :

(2) Զարմանալի է Յ. Գաթրճեանի խտուրտ երկար հակառակելն՝ ի Հանգանակ Հաւատոյ գործոյն մէջ (վեցնա. 1891, էջ 2-4) մեր Հանգանակին Նիկիական անուէր տրուած ըլլալուն, որ ոչ ինչ տարբեր առմա է, քան ինչ որ Արեւմտեայք ալ իրենց հին Հանգանակին «Առաքել կ'անուանէին : Կը սխալին յոյժ նոքա՝ որ հին լեզուի եւ բացատրութեանց մէջ այժմեան գիտական ճշգրտութիւններն կը պնտոնեն :

(3) Մեր Հանգանակին յունարէն բնագիրն երեւան ելաւ, իբր ամօք յառաջ, յանուն սրբոյն Աթանասայ, որ եւ նոյն հայրապետին գօծոց վերջին հրատարակութեանց մէջ կը տեսնուի. (Բղղ. Գաթրճեան Հանգ. հար. էջ 34) :

յութեան վրայ կը դառնային, յաջորդեց այժմ ուրիշ մը, որ էր՝ Մարգարեւոր Բանին երկուց, — աստուածային եւ մարդկային — բնութեանց վերաբերութեան վրայ, որում կը պատկանի նաեւ մեր այժմեան ինչորոյն : նեստոր Անտիոքացի եւ Անտիոքեան զպրոցէն, ուղեւով բնականցօրէն հերքել Ապոլինարի (Աղեքսանդրեան զպրոցէն) աղանդը : — որ կ'ուրանայր ի Քրիստոս մարդկային բանական հոգւոյն գոյութիւնը, անոր տեղ դնելով զաստուածութիւն Բանին՝ իբր հոգի, — ելաւ դաւանելու ի Քրիստոս, ըստ աստուածաբանական բանաձեւի, Երկու բնութիւն կամ երկու անձն յաժանեալ, յորմէ եւ կը հետեւցունէր ըսել թէ Ս. Կոյսն Քրիստոսի մարդկային բնութեան կամ անձին ծնող եղաւ եւ ոչ աստուածայնոյն, որով ներելի չէ զնա Աստուածածին կոչել, այլ մարդածին, կամ առ առաւելն՝ Քրիստոսածին (1) : Սակաւք չեղան այս վարդապետութեան հետեւողք, արդէն նախապատրաստեալ ըլլալով յայն՝ Դիոզոր Տարսոնի (մ. 394) եւ Թէոդորոս Մոպսուեստիոյ (393-428)՝ մեծա համբաւ եպիսկոպոսաց գրութիւններովն : բայց որովհետեւ հետեւութիւնն իրտեցուց զժողովուրդն եւ շատ մը բարեպաշտ մտքեր, զայն անպատուութիւն իմն նկատելով առ Ս. Կոյսն, անտի ալէկոնութիւն մեծ սկըսաւ յուզուիլ ի ԿՊօլս : Արագ հասաւ համբաւն յԱղեքսանդրիա, հակառակորդ զպրոցին կեդրոնավայրը : եւ անա Կիւրեղ, որ տեղւոյն պատրիարքն էր (իբր 412-444) — բնութիւն մը կրակոտ բռնուն եւ յարձակող՝ քիչ մը չափէն աւելի թափով, համանման իւր Թէոփիլոս հօրեղբօր եւ նախորդին՝ որ զՍիկեբերան շարաշար հալածեր էր, զինուեցաւ իսկոյն իւր գիտութեամբն եւ գրչով գերագոյն քան զնեստոր : իւր չուրջն խառն բռնեցան նաեւ մոլեռանդն վանականք Թերալիոյս, եւ արտաքին խառն վութեանց հետ, սկսան տեղալ դէմընդդէմ գրութիւնք եւ նզովք, եւ

(1) Զարմանալի է տեսնել որ նեստորականութեան գոյն մը կը կըրէ մեր Մք. ամ. ին կցորդ երգն. «Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի, մատո զաղաչանս մեր Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ» : Սմին զուգակից է եւ Շարականն. «Մ քեղ եմք ապաւինեալ, Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ» : Բնաողատօրէն այս բառական ապահով նշան մի է այդ երգերուն Ե-գարեան հնութեան, հաւանակարար այն իսկ ժամանակին, յորում տակաւին Հայք բարեկամ էին (զորմէ պիտի խօսիմք այլ առթիւ) Թէոդորոսի Մոպսուեստացւոյ : որ նեստորի վարդապետն եղած էր, եւ նորա գաղափարացն նախահեղինակ : քանզի զգուշալի էր Քրիստոսի մայր բացատրութիւնն Եփեսոսի ժողովէն ետեւ : Զայս մեր կարծիքն կը հաստատէ այդ փառաւորեալ երգոյն աստուածածին բառը, որոյ յետամոյժ ըլլալն յայտնի կ'երեւի : զի դիւրին չըլլալով այդպիսի ծանօթ երգ մը բողոքովին ջնջել, զայդ յաւելուածն ընել հարկ սեպած են յաջորդք : Կը յիշեն անշուշտ մեր բանասէրք որ նոյնպիսի հնարք գործածուեցաւ առ Ռուբինեամբք, նոյն Մք. ամ. երգոյն նախընթաց Գոնսւանալի գիւն աղօթքին վերջը՝ Քրիստոս ամ. մեր բառերը աւելցունելով, որպէս զի ապահով ըլլան Յոյնք թէ զայն ոչ ի դէմս Երրորդութեան կ'երգեմք, ինչպէս իրենք, այլ Քրիստոսի :

խնդիրն այնքան զայրացաւ եւ տարածուեցաւ, որ հարկ եղաւ Տիեզերական ժողովոյ դիմել: Դուժարեցաւ ժողովն յԵփեսոս (Ամ ՏՆ. 431). դատապարտեցաւ նեստոր եւ աքսորուեցաւ. բայց չանհետացաւ իրեն հետ նաեւ իւր վարդապետութիւնը: Ճակատամարտն աւելի զայրացաւ: Անտիոքեան դպրոցին կուսակիցք, գլխաւորապէս Ասորուոց մեծ մասն, պինդ կեցան. բայց վերջ ի վերջոյ երբ նահանջել ստիպուեցան, Եղեւսիոյ դպրոցն եղաւ իրենց ապաստանարանն, որ նոյնպէս երեւելի եղած էր յԻ դարէ. եւ երբ այն եւս փակուեցաւ Չենոն կայսեր հրամանաւ ի 489, իբր նեստորականութեան վառարան, փոխադրուեցան հետեւողքն ի Մծբին, որ 363 թուականէն ի վեր Պարսից ձեռքն անցած էր, եւ անդ գլուխ կենալովն Բարձուժայի, եւ սլաշտպանութիւն ալ գանելով Պարսից թագաւորներէն, տարածուեցաւ աղանդը մինչ ի Տիգրիսեան նահանգս եւ յԱսորեստան, եւ անտի ի Պարսկաստան, ուր բաւական զօրացած էր այն դարերուն մէջ քրիստոնէութիւնը, եւ գլխաւոր աթոռանիստն էր Սելեւկիա-Տիզրոն: Անտի եւ անդր ապա գործունեայ առաքելութեամբք ոստեր արձակեց աղանդն մինչեւ ի Սորասան, ի Հնդկիս եւ մինչեւ ի Չին: Եւ ինչպէս յայտնի է, մինչեւ ցայսօր իսկ կը տեւէ նաստուրի կոչուած Ասորուոց մէջ:


Բայց վէճն երբ տակաւին կոռուոյ դաշտին վրայ էր, եւ երկու հակառակ կուսակցութիւնք, Կիւրեղականք եւ Նեստորականք, իրարու հետ կը մաքառէին. վերջնոց բանաձեւն էր, ինչպէս տեսանք, Երկու թնուրիւն բաժանեալ (յերկուս դեմս կամ յերկուս անձինս) ըսել, որոյ դէմ Եփեսոսի ժողովն Երկու բնութեանց բաժանումն վերուց, եւ վարդապետեց միաւորումն անչփոթ, Բայց որովհետեւ այս երկու բանաձեւերուն մէջ ի բաժանեալ եւ միացեալ բառերը՝ այնչափ ազդու չէին ընդ հակադրութիւնը լսողներուն ականջաց, եթէ Երկու թնուրիւն ազդողական բառերը, որ Նեստորականաց բանաձեւին հիմնական տարբերքն էին, իրենց տեղը մնային: Չեմ հականեստորականք լաւագոյն համարեցան իրենց բանաձեւ ընտրել, Մի թնուրիւն Բանին մարմնացելոյ ասացուածը, որ ոչ միայն ի Կիւրեղէ բազմիցս գործածուած էր (1), եւ Եփեսոսի ժողովէն անդա-

(1) Ահա Ս. Կիւրղի այդ համբաւաւոր խօսքին վկայութիւնքն. — զորս ի մէջ կը բերեմք Թէորիանէի բանակցութեան քաղելով, զոր ըրած է նա ընդ մերում Հայրապետին Ներսիսի Շնորհալուոյ (ի 1170), որոյ եւ հայերէն թարգմանութիւնն հրատարակուած է, ինչ ինչ յապաւմամբք, ի Պատմութեան Կարողիկի վարդապետութեան ի Հայս՝ Հ. Աղեք. Պալճեանի (Վեննա. 1878) էջ 204-259. — Նախ ի թղթին առ Եւզոգիոս այսպէս կ'ըսէ. «Թէպէտ եւ ասիցէ նա [Նեստորիոս] երկու բնութիւնս, ցուցեալ զխաբ մարմնոյ եւ Բանին, — քանզի այլ բնութիւն է Բանի եւ այլ մարմնոյ, — սակայն զմիաւորութիւնն ոչ խոստովանի ընդ մեզ. քանզի մեք ի միաւորութեան սոցա՝ մի Գրիստոս, մի Որդի եւ մի Տէր խոստովանեմք, եւս եւ՝ մի բնութիւն Բանին մարմնացեալ» (էջ 209. — տե՛ս եւ էջ 213): — Ի նմին թղթի կը կրկնէ վերտին. «Յերաւի՛ յորժամ

տապարտ մնացած, այլ եւ ի մեծէն Աթանասայ, յորմէ առած էր եւ Կիւրեղ, որով եւ նիկիական, ըսել է՝ զուտ եւ կատարեալ ուղղափառական. որով ընդունելի ընծայեցաւ այն յընդհանուրս առանց ինչ ընդդիմութեան, Եփեսոսականաց (որոցմէ էր եւ մեծն Պրոկղ), իբր իրենց ուղղափառութեան նշանաբանը, բաց ի Թէոդորեանաց ոմանց, մինչեւ ելաւ Եւտիքէս, ոչ շատ տարի վերջը, որ վեր ի վայր ըրաւ համաձայնութիւնը:

Եւտիքէս անուանեալն վանահայր մի էր յունական վանքի մը ի Կոստանդնուպոլիս. ինքն եւ իւր վարդապետութիւնն ոչինչ, բայց քար մը նետած եղաւ հորը: Այդ խեղճուկ ծերունոյն միտքը, 70 տարի իւր վանքին մէջ փակուած, չգիտեմք մի թնուրիւն բառէն ցնորեալ, թէ Աստուածածին բառին ջերմեանդն յարուսէն տապացեալ, ուղեւով որ ինքն եւս Նեստորական մոլորութեան, որոյ մոլեռանդն հակառակորդ էր, ջախջախիչ վերջին հարուած մը տայ, գաղափար մը յղացաւ, որով՝ կարծէր կարող ըլլալ ապահով կերպիւ հետեւցունել որ զՍ. Կոյսն ոչ թէ մարդածին, այլ ստիպում իսկ եմք Աստուածածին կոչել: Երեւակայեց ի Գրիստոս աստուածային եւ մարդկային բնութիւններն ոչ լոկ միացեալ քարոզել, այլ ի մի զանգեալ եւ խառնափնդորեալ: Բանն մարդացեալ, կ'ըսէր, զիւր մարդկային բնութիւնն աստուածացոյց, իւր աստուածութեան մէջ զայն ընկղմելով, եւ մեր մարդկային բնութեանէն տարբեր գոյացութիւն մը տալով անոր. այնու բնութեամբ ելաւ ի խաչ, եւ այնու բնութեամբ այդ մարմինն կարողացաւ յարութիւն առնուլ ի գե-

զմիաւորութիւնն խոստովանիմք, այնուհետեւ չէ հնար թէ բաժանիցին միաւորանքն, այլ յետ միաւորութեանն՝ մի է Որդի եւ մի բնութիւն Բանին մարմնացելոյ» — Դարձեալ ի թղթին առ Սուկենտոս. «Չայսուսիկ ի խորհուրդս մոաց յուշ ածեալ՝ բնաւ իսկ ոչ յանցանիցեմք, եթէ երկուց բնութեանցն զուգընթացութեամբ՝ զմիաւորութիւնն եղեալ ասիցեմք. սակայն եւ այնպէս յետ միաւորութեան զբնութիւնսն ի միմեանց ոչ բաժանեմք, եւ ոչ զմին եւ զանբաժանելին՝ յերկուս որդիս անջատեմք, այլ ասեմք մի Որդի, եւ որպէս Հարքն խօսեցան, [յորոց մին է եւ Աթանաս], մի բնութիւն Բանին մարմնացեալ» (Անդ), Սակայն դիտելի է որ Թէորիանէ իւր զժուարութեանէն պրծելու համար, կ'ուզէ բուխ մը դնել Բանին վրայ, եւ մարմնացեալ ածականը զատել, իբր բայ նկատել տալով. եւ կը բացատրէ իսկ. «Սուրբն Կիւրեղ... ասոց Մի թնուրիւն Բանին, եւ ապա յաւել ի վերայ՝ մարմնացեալ» (Անդ. էջ 205), իբր ըսած ըլլայ. Մի թնուրիւն Բանին, որ մարմնացաւ, որով ոչ միայն զբնագիրն, այլ եւ խօսքին իմաստը կը խեղաթիւրէ: Չայդ հատուածիկը՝ իբր անկցորդ անջատ խօսք մը թողով նախնիթացներէն, Գաթրբանեան տեղ մը (Հանգանակ Հաւատոյ, Վեննա. 1891, էջ 36) այդ խօսքին վկայութիւնը նաեւ ի Ս. Աթանասայ՝ յոյն բնագրաւն ի մէջ կը բերէ ի ճառէն որ Յդ. Մարդեղոսեան Բանին, ուր կը տեսնեմք որ մարմնացեալ բանն համաձայնած է հոլովով Բանին բառին հետ: Σωδαρχομένου — Բանին մարմնացելոյ, որով Թէորիանէի խեղաթիւրումն կը մատնուի: Այսպէս ընդհանրապէս կարգացած են եւ մեր նախնիք, այդպէս եւ Ասորիք, ինչպէս կը տեղեկացունէ ասորագէտ եւ բողոքի հեղինակ մը:



ընդամենն (1) Ահա անհեթեթ յուշկապարկային վարդապետութիւն մը որ յայտնի կը տեսնուի որ կիւրեղեան բանաձեւին մի բնութիւն բառը ըստ գրոյն առած էր. բայց զարմանալի՝ ոչ ստեղծողն, այլ հետեւողներն, որ բարեբաղդաբար իւր վանականքն էին միայն. (տես Փորձի ժողովոյ)։ Սակայն այդ արգելք չեղաւ ինչպէս արագ ի հրապարակ ելնելուն, եւ այն իւր իսկ ծանծաղամտութեամբն, զիւր այդ մեծ գիւտն չծածկեց հաղորդել թղթովք։ Առջի տեղեկութիւն առնողներէն մին եղաւ Թէ-ողորեանտս կիւրեղեայ (Կիւրիկիա) կաթսկոպոսն, որ Անտիոքեան դպրոցէն էր, հմուտ եւ զօրաւոր գրիչ, կանխաւ կիւրղի հակառակորդն Եփեսոսի վէճին ժամանակ, եւ ինքն սիրահար Թէոդորոս Մոպսուեստացոյ՝ նեստորի վարդապետին գրութեանց. ձեռք առաւ անմիջապէս հերքել զայն՝ (յամին 446-447) յերիս գիրս, Երանխսէս (Մուրացիկ) անուանեալ, յորս Եւտիքէսի վարդապետութիւնները ուրիշ բան չէր գտներ, բայց աւելի կամ պակաս գնոստիկեան տեսութեանց խառնուրդ, եւ այլեւ-այլ աղանդաւոր գրութիւններէ կարկատեալ խեչերանք. բայց մի եւ նոյն ժամանակ զանց չէր ըներ Երկու բնութեան ջատագով ըլլալ, ծանր հարուած մը տալով կիւրեղեանց (Եփեսոսեանց)։ Մի բնութեան այդ հրատարակութիւնն խոռոկեց դարձեալ մտքերը, եւ Փլաբիանոս, պատրիարքն ԿՊՕԻ (447-451) զԵւտիքէս յատեան կոչեց քառասուն կաթսկոպոսօք (12-27 Նոյ. 448), եւ զատակնիք տուաւ իւր վարդապետինեան եւ Ապոզի-նարեան աղանդոցն հետեւող, եւ մերժեց ի հաղորդութենէ զնա եւ նորա հետ իւր հետեւող վանականները։

Բայց Փլաբիանոսի ժողովոյն վճիռը՝ թէ եւ արդար եւ ուղիղ, բայց անիրաւ հետեւանք մը ունենալու էր, եւ ունեցաւ. Եւտիքէսի ցնորից հետ՝ նաեւ մի բնութիւն բանաձեւն վտանգի ընկաւ, իբր նորա մոլորման՝

(1) Եւտիքէսի վարդապետութիւնը երկմասնեայ էր. նախ՝ թէ «Քրիստոս երկու բնութիւն ունէր նախ քան զմարդանայն(!), եւ յետ մարդանայն՝ մի բնութիւն եղաւ»։ Եւ երկրորդ թէ «Քրիստոսի մարմինն զոր ի կուսէն էաւ, տարբեր էր մեր մարդկային մարմնոյ գոյացութեանէն»։ (Փլաբ. առ Լեւոն Պապ, տես Մանսի, Ե. 1351-8)։ Չայս վերջինս եւս, որ յայտնի հակառակ էր կիւրղի բանից, որ զքրիստոս «համարուն չօր ըստ աստուածութեան, եւ համարուն մօր ըստ մարդկութեան» ըսած էր, Եւտիքէս ուրիշ վարդապետութեան մը վրայ հիմնած է, այն թէ Քրիստոսի մարմինն յերկնուստ բերուեցաւ առ կոյսն. անշուշտ Պօղոսի խօսքին կրթնած, թէ «Են մարմինք երկրաւորք եւ մարմինք երկնաւորք»։ զի ըստ գրոյն ասնող միտք մը ունէր Եւտիքէս, հանգոյն իմն Մարդակերպեայն թեքայիդայ, որք Աստուծոյ գլուխ, ձեռք, ոտք կ'ընչուեց խոստովանել Փլաբիանոսի ատենին առջեւ, բայց կը մասնէ իւր ատր, եւ զայս, կ'աւելցունէ մասնաւոր կերպիւ թէ «Կը նզովեմ նաեւ զանոնք որք կ'ըսեն թէ Քրիստոսի մարմինն յերկնուստ բերուեցաւ»։ Ինքն եւս էր ըսողն ընդ Ապոզինարի՝ Զփնեղակն մեղակս։

ոչ թէ լոկ առիթ, այլ բուն իսկ պատճառ։ Յոյժ ծանր էր այս հետեւանքը, յայտն գլխաւորաբար՝ որ կիւրեղեականք, որ մինչեւ ցայն վայր իրենց ընդգիծացողաց (Թէոդորեանց) բերանը կը կարկէին առարկելով թէ Երկու բնութիւն ըսելն նեստորականութիւն է, այժմ նոքա եւս սկսան հակադարձաբար առարկել իրենց թէ՛ նաեւ Մի բնութիւն ըսելն Եւտիքեականութիւն է. որով վէճն ոչ թէ միայն նոր կրակ առաւ, եւ սաստկագոյն բոցով, այլ բողբոլիւն իսկ անհաշտելի վիճակի մէջ ընկաւ, երկու կողմանքն ալ հաւասար զէնքով զինուելով իրարու դէմ։ Այս բողբոլիւն նոր կերպարանք տալ էր կոուոյն, Փլաբիանոսի ժողովոյն յառաջ բերած հետեւանքն այնքան մեծ էր եւ զգալի, որ ինքն Փլաբիանոս ալ անոր հակազդումն (réaction) կրեց, զի կայսրն Թէոդոս Փոքր, որ ջերմ Եփեսոսեան (կիւրեղեական) էր, իսկոյն դաւանութիւն մը պահանջեց, եւ նա Առաքելոյն խօսքը թէ «Պատրաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն» (Ա. Պետր. գ. 15) բնաբան զնելով՝ տըլաւ զայն, յայտարարելով ի նմա թէ չխուսէր նաեւ ինքն «Մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» ըսելէ։ Բայց երեւի այդ գրաւոր դաւանութիւնն իսկ չհամոզեց զԹէոդոս, Զի որչափ եւ արդար կոչեցինք Փլաբիանոսի դատաստանը, բայց թէ անկեղծաբար՝ կատարեց զայն, ինչպէս ժողովոյն տեղեկագիրք կ'ուզեն հաստատել երկար պատմութիւններով, մեք կրնամք իրաւամբ տարակուսիլ, եւ կասկածիլ որ այդ ժողովն զիտեալ էր ոչ կիւրեղեականաց, այլ ուղղակի ի ԿՊՕԻէ առ Աղեքսանդրեան աթոռն նեա մը արձըկել։ Չայս կէտն հարկ է որ բացատրեմք։

Ակնարկեցինք ի վեր անդր որ ի սկզբանէ այդ աստուածաբանական կոուոց ներքին շարժիչն՝ Աղեքսանդրեան եւ Անտիոքեան դպրոցաց նախանձընդդիմութիւնն էր. սակայն վերջին ժամանակները աւելի բուռն եւ անեղագոյն ոգի մը սկսած էր ներս սպրդիլ. — այն է՝ Պատրիարքական աթոռոց իրարու գերադան ըլլալու մարմաջը, որով ժողովրդական կոուոյ հրդեհին վրայ՝ բարձրագոյն տեղերէ նաւթ սկսաւ թափուիլ, ինչպէս յայտնի է, Մեծն կիւրեղ իւր անձնական հանճարովն եւ նեստորական մեծի կոուոյն առթիւ, որոյ ինքն եղած էր վեհագոյն զօրագըլուխն, եւ կերպիւ իմն ինքն միակ պատգամատու այն խնդրոյն մէջ, զէպ յիւր Աղեքսանդրեան աթոռն դարձուցած էր ամենուն աչքը եւ յարգանքը։ Երբ զայդ փառքը տեղոյն վրայ թողած՝ ինքն մեկնեցաւ յաշխարհէ (ի 444), նորա յաջորդն Դիոսկորոս (444-451), թէ եւ հետի նորա հանճարոյն եւ կարողութեանը հաւասարելէ, բայց ոչ ինչ նուազ եւ ինքն իրանամարձակ, եւ փառասէր եւս ոգւոյ տէր, գաղափար յղացաւ կիւրղի ձեռք ձգած բարոյական ազդեցութիւնը՝ իրականութեան մը բերել, զիւր աթոռն գերադան ընդունել տալով քան զԱնտիոքայն եւ քան զԿոստանդնուպոլսին, որոց երկուքն ալ յայնժամ տկար ձեռքերու մէջ կը գտնուէին։ Արդէն առաջնոյն վրայ ինքն իւր ձեռնձգութիւնն ի գործ

գրած էր քանի մը անգամ, եւ Փլաբիանոս տեղեկացած էր այնմ. ծանօթ է Թէոդորեոսի կիւրրեայ եպիսկոպոսին, որ նոյն առիթներէն վերաւորուած էր, առ Փլաբիանոս գրածն. «Պանծալ կը պանծայ նա (Դիոսկորոս) թէ Մարկոսի է իւր աթոռն, մինչդեռ գիտէ եւ ինքն թէ Անտիոք՝ Պետրոսի աթոռն է, Մարկոսի վարդապետին եւ Առաքելոց գլխաւորին» (Թղթ. 22) : — Սոքա՛ մինչ աստ զիրար կը լրտեսէին եւ զիրար գլել կը ջանային, անդուստ այդոնց երկուքին վրայ միանգամայն երրորդ սաւառնող մը կար ի հետեւն բարձր՝ աւելի ընդարձակագոյն յատակագծով : — Հոռո՛ւ Մինչդեռ բարբարոսաց արշաւանք կապիտոլիոնի նաեւ չէնքերուն չէին թողուր քար քարի վրայ մնալ, եւ Արեւմտեան կայսրութիւնն կծկեալ անիւ ի Ռավեննա՝ իւր վերջին մահու հարուածոյն կը սպասէր, կրօնական ընկճեալ՝ բայց ամուր ջղոտ ոգի մը, գեանադամանաց խորերէն գլուխ դուրս հանելով, մեղմով բազմած էր աւերակաց գահուն վրայ, եւ իւր ձեռքերն սակաւ առ սակաւ սողացունելով, գրաւած Արեւմտից սահմանները, եւ հոգեւորական միանձեման հզօր իշխանութիւն մը կազմած : Այս անյուսալի յաջողուած՝ աւելի եւս խրախուսած էր ուրիշ անյուսալեաց յուսալ, եւ դարձան տենչացող աչքերն դէպ յԱրեւելս. եւ Արեւելք՝ ոչ միայն անդգոյ՛, այլ իւր անխորհուրդ աստուածաբանական — բնագանցական անվերջ եւ անհաշտելի վէճերով յիմարացած, հրաւէր իսկ սկսած էր կարգալ առ տենջացողն : Երկուստեք կուտարարք զիրար յաղթանարելու մտօք՝ կը գիմէին ի Հոռո՛ւ, իբր անշահասէր դատաւորի մը, (ինչպէս երբեմն նաեւ արտաքին իշխանութիւնք ըրած էին առ հեթանոս Հոռոմաւ, իրենց տուժիւք), իրենց խնդիրներուն իրաւարար ըլլալու : Այսպէս ըրին Աթանաս, Ոսկերեբան, կիւրեղ, Նեստոր, այսպէս ջանաց ընել եւ Թէոդորեոս, թէեւ արգելուեցաւ. այսպէս պիտի ընեն եւ այժմեան կառուողք : Սակայն ներկայ պարագայն բոլորովին տարբեր էր նախորդներէն. Հոռոմայ աթոռոյն վրայ բազմած էր Լեւոն Ա Մեծն (440-461), նա ինքն որ այդ միանձեման իշխանութեան գաղափարին բուն յղացողն էր, եւ արդէն անոր առաջին հիման քարը դնել սկսած էր իւր նախորդին՝ կեղեստինոս Պապին (432-440) օրով, որուն խորհրդատուն էր :

Այս վտանգալից հանգամանաց մէջ ուրեմն՝ Եւտիքէս զիւր դատապարտութիւնը բարեքելու համար, ոչ միայն յԱղեքսանդրիա եւ յԵրուսաղէմ, այլ կը բողոքէր նաեւ ի Հոռո՛ւ, եւ այն պատճառաւ զնոյն ընել կը ստիպուէր նաեւ Փլաբիանոս ակամայ կամօք, զի Լեւոն դարմանաց թուղթ կը գրէ իրեն, թէ ինչո՛ւ լռած էր : Լեւոն արհամարհեց զԵւտիքէս (1), այլ չարհամարհեց պատեհութիւնը, որ իւր խորհրդոց մեծ քայլ մը առնուլ կուտար : Օրինակ մը ունէր իւր առջեւ զկիւրեղ, որուն կրնար թէ նմանիլ, եւ թէ կերպիւ իմն նաեւ խախտել անոր կոթողը :

(1) «Աւելի ախմարութիւն կը տեսնեմ այդ ձերոյն վրայ՝ քան թէ չարամտութիւն», կը գրէր առ Պուղքերիա քոյր Թէոդոսի :

Ինչպէս նա Նեստորի դէմ թղթեր գրած էր, որք իրենց հզօր վարդապետութեամբն կանոնական գրութեանց կարգն անցած էին, մինչեւ ժողովոց մէջ իբր պատգամ կարդացուիլ, զնոյն դերն եւ ինքն Լեւոն այժմ կատարելու յորդորուեցաւ : Իւր այն արհամարհուած «տխամար» ձերոյն խեղճուկ ցնդաբանութիւնները իրեն նիւթ առնելով՝ յօրինեց խնամեալ փառաւոր վարդապետական գրութիւն մը, եւ ինչպէս կիւրեղ իւր գրութիւնները թղթոց ձեւով առ այս ոք կամ այն ուղղած էր, նաեւ Լեւոն ուղղեց զիւրն այժմ առ Փլաբիանոս, — եւ այս իսկ էր համբաւաւոր կոչուածն՝ *Solus Lxxviii* (449), եւ այս սոմարին եզրակացութիւնն էր՝ կիւրեղեան բանաձեւին ընդդէմը պաշտպանել : Երկու բնուրիւն ի միում անձնաւորութեան :

Դիոսկորոս, որ իւր դրիւքն կիւրեղականաց պարագլուխն ըլլալու իրաւունքն ունէր, տեսաւ վտանգը, յոր գլորեցուցեր էր զխնդիրն Եւտիքէսի անհանձարութիւնը, եւ զինուեցաւ դարմանել : Հարկ էր փութալ նախ անյապաղ բե՛յանել Փլաբիանեան ժողովոյն որոշումն : Իւր աղբեցութեամբն զոր ունէր յարքունիս, հրաման հանել տուաւ ի կայսերէ, որ ընդհանրական ժողով մը գումարուի, եւ գումարուեցաւ յԵփեսոս (8 օգոստ. 449), նոյն Մարիամ եկեղեցւոյն մէջ, ուր 19 ամօք յառաջ Գ տիեղերական կատարուած էր : Հաւաքուեցան 150 եպիսկոպոսք, յորս կային նաեւ Հոռոմայ ներկայացուցիչք, հետերնին բերելով Լեւոնեան Տօմարը, Դիոսկորոսի խորհած յատակագիծն գուշակելի է. ծածկել Եւտիքէսի սխալը, եւ անպարտ արձակել տալ, ոչ թէ նորա անձին համար վոյթ ունենալով, եւ կամ ողջամիտ ոք զնա ճանաչելով, (կը լսեմք յետոյ զիւր բուն դատաստանն անոր վրայ), այլ զի նորա ազատելովն միայն՝ կարելի էր ազատել կիւրեղեան բանաձեւն, եւ նոյն իսկ կիւրեղեանազութիւնը : Միակ հնարքն էր առ այս ուրեմն ժողովոյն դռները փակել ընդդէմ Թէոդորեոսի կիւրեղեայ եւ Եւտիքիոսի Դորիւղեայ եպիսկոպոսաց, երկուքն ալ Եւտիքեայ հակառակորդքն, եւ երկուքն ալ քաջ տեղեակ նորա վարդապետութեանց արատաւոր կողմերուն, եւ վերջապէս, երկուքն միայն կարողք եւ պատրաստուած զայնս անխնայ ժողովոյն առջեւ խայտառակելու : Ուստի առաջնոյն ի Թէոդոսէ հրաման ղըրկել տուաւ որ իւր քաղաքը անշարժ մնայ (ի կիւրրոս), եւ միւսոյն՝ Եւտիքիոսի արքունականին բերանով լսել տուաւ ի ժողովին, թէ Եւտիքիոս արդէն զիւր դատախազութիւնն ըրած է Փլաբիանոսի ժողովոյն մէջ, ուստի իւր ներկայութիւնը կարեւոր չէ (1) :

(1) Ինքնատիպ (caractéristique) բարոյից տէր էր Եւտիքիոսը, որ մեծ մասն ունի այս վէճերուն մէջ : Աշխարհիկ եղած ժամանակէն, սիրահար աստուածաբանական խնդրոց եւ հակաճանութեանց, հոն սողոսկելով միշտ ուր հերետիկոսութեան հոտ կ'առնոյր, աքիսի նման զանոնք հալածելու, ինքն եղած է առաջին անգամ Նեստորի դէմ յարձակողն յեկեղեցւոյ, եւ ինքն դարձեալ յետոյ, ինչպէս կը տեսնեմք, Եւ

Այսու նախագիտոյ պատրաստութեամբ ուրեմն բացաւ Դիոսկորոս ժողովը, եւ իբր նախագահ՝ իւր առաջին յայտարարութիւնն այն եղաւ թէ ժողովոյս նպատակն ոչ է հաւատոյ նոր վարդապետութիւն սահմանել, այլ քննել միայն թէ Փլաբիանոսի որոշումն զոր ըրաւ իւր ժողովոյն մէջ, համաձայն է թէ ոչ՝ Նիկիոյ եւ Նիքեոսի ժողովոց, որք թէ եւ երկու, բայց զմի եւ նոյն հաւատս ուղղափառութեան ունին: Այս յայտարարութիւնն յայտնի կը ցուցնէ թէ յո՞ կը հայէր Դիոսկորոսի միտքը: Քննութիւնք եւ հարցափորձք կատարուեցան ըստ օրինի, ուր ներկայ էին եւ Կայսեր արքունականք, իբր հսկողք՝ արդարացաւ Նւտիքէս իբր հարազատ Կիւրեղական, նորա վարդապետութեանց անվնաս մասերը միայն յատեան հանուելով, — այնպէս որ նաեւ Հիլարոս՝ Հոռոմայ նուիրակն զիւր հաւանութեան քուէն տուաւ, եւ, — եւ դատապարտուեցաւ Փլաբիանոս, իբր հակառակ (Նեստորական) վարդապետութեան մոծիչ ի հաւատս, եւ Դիոսկորոս հետեցուց որ այս կը զրկէ զնա եւ յաթոռոյն: Այս վերջինս, յորում կասկածելի է որ հաշուած ըլլայ նաեւ պատրիարքական պերագահութեան խնդիրը, Փլաբիանոսի կուսակցաց կողմանէ մեծ ընդդիմութիւն եւ շիթումն յարոյց ի ժողովին, այնպէս որ հաստատման Դիոսկորոս հարկ տեսաւ բռնութեան զիմել եւ այնու զՓլաբիանոս յեկեղեցոյն դուրս հանել: Բայց մոլեռանդն դործադիրք քան զչափն անդը անցան, մանաւանդ Բարձումա անուն մէկը, (ինչպէս յետոյ Գաղկեդոնի ժողովոյն մէջ յայտնուեցաւ), որ պարտական մնաց Փլաբիանոսի մահուան, որ երեք օր յետոյ պատահեցաւ երբ ճամբայ ելած էր յաքսորավայրն երթալու ի Գանդրաս (1):

Իբր յաղթական դարձաւ Դիոսկորոս ուրեմն յեզիպտոս, սակայն առանց անդրադառնալու, որ ծանր քրէական յանձանք մը գործած էր. Լեւոն Պապին Տօմարը կարգալ տուած չէր ի ժողովին: Պատճառն մեզ յայտնի է, որ ոչ էր ի նախատինս գայն յօրինող անձին, այլ զի առաջուրնէ տեղեակ էր (Tillemont, XV, 559), որ այդ գրութիւնը՝ Նու-

տիքէսի դէմ, թէեւ Նեստորի բոլորովին հակադարձն, անոր բերնէն որ սայով նախ անոր ամեն գաղտնիքը՝ իբր մտերիմ բարեկամ: Սակայն եթէ անհաճոյ կերպարանք մը միանգամայն կը ներկայացուէ Նեստորոսի մոլեռանդութիւնը, իւր անդուծ եւ լիբր յարձակումներն են, որ մինչեւ ցվերջին կէտն ձգմել կը ջանայ զիւր հակառակորդն, այնպէս որ նոյն ինքն Փլաբիանոս յայն ակնարկել տուած է իւր ժողովոյն մէջ ըսելով առ Նւտիքէս. «Աչքդ լաւ բաց, զի առջիդ այնպիսի մէկն ունիս, որուն ուղղափառութեան տաքութեան գիմաց՝ կրակն ալ պաղ է»: Ի վարձ իւր այդ արդեանց անշուշտ՝ եպիսկոպոսական աթոռ մը արուած է. բայց այնպիսի՝ որոյ համար ոչ շատ դո՞ կը գանգատէր, թէ չկրնար իւր աղքատութեամբն՝ փարթամ Նւտիքէսի հետ ի վսեբ դալ:

(1) Թէոդորեոս կը գանգատի իւր թղթոց մէջ (Թղթ. 169) որ Նիքեոսի (Գ տիեզերական) ժամանակ՝ կղերն եւ վանականք քարկոծ ըրած էին զինքը:

կոր ընտրիւն բանաձեւին ջատագով էր (1). Բայց աններելի զանցառութիւն էր այդ Լեւոնի առջեւ, որ այն ինչ ժողովոյն լուրն առաւ, իսկոյն գանգատանոց թղթեր տեղացուց ի ԿՊօլիս, Դիոսկորեան ժողովը «Նւազակաց ժողով» կոչելով, (որ եւ ցարդ ընդունուած է առ պատմիչս, անշուշտ իբր Պապական ձեռքէ առնուած մկրտութեան անուն), եւ կը պահանջէր ի Թէոդոս Կայսերէ որ նոր ժողով մը գումարուի վերստին անոր դէմ: Բայց Թէոդոս՝ ականջ չդրաւ. պատասխանեց որ ինքն Նիքեոսեան (Դիոսկորոսի) ժողովը շատ կանոնաւոր կը գտնէ, ուր իւր իսկ ներկայացուցիչք կային, եւ թէ Փլաբիանոս արժանի էր պատժոյն, զի նոր դաւանական ձեւ կ'ուզէր մտցունել յեկեղեցին:

Նրկար չտեւեց այս արգելքը. տարի մը չլրացած, Փլաբիանոսի պէս՝ նաեւ Թէոդորոս ինքն վաղամահ կ'ըլլայ, որոյ ժամանակ (ինչպէս կը պատմեն) ձիւն ընկնելով, Տօմարայ (29 Յուլիս 451), 41 տարի գահակալելէն վերջը, եւ իրեն կը յաջորդէ իւր քոյրն Պուղքերիա (451-453), որ արդէն կառավարութեան մէջ ի վաղուց մատն ունէր, բայց վերջերք երեսէ ընկած, եւ գահ ելածին պէս՝ իրեն ամուսին եւ գահակից կ'ընտրէ Մարկիանոս (451-457) անուն՝ զինուորութեանէ յառաջ եկած սինկլիտոս մը՝ վաթսնամեայ: Սոքա երկոքին կը փութան անմիջապէս սիրալիւր ընդունելութիւն ընել Լեւոնի թղթոց եւ դեսպանաց, եւ ըստ նոցա խնդրանաց՝ այն եպիսկոպոսներէն, որ իրենց շնորհաւորութեան եկած էին ի ԿՊօլիս, ձեռնագիր պահանջել Լեւոնեան Տօմարին, եւ զնոյն ընել տալ նաեւ գաւառաց մէջ, Լեւոն յաջողելով նաեւ ջնջել տալ Դիոսկորոսի եւ անոր համախոհից անուանքն Պատարագի ցուցակէն, իւր նպատակին ինքն զինքն հասած նկատելով, միաք կը յայտնէ Մարկիանոսի որ ինքն այլ եւս պէտք չտեսներ նոր ժողով գումարելու (Թղթ. 2Բ, 23 Ապր. 451): Բայց այս անգամ ալ Մարկիանոս ականջ չկատար, — գուցէ իրեն տարօրինակ երեւնալով որ հաւատոյ խնդիր մը՝ այդպես ցրիւ անհատականներէ ձեռնագիր ժողովելով վճուռի, (որ մեզ՝ ներուի ըսել՝ 1870 թուականը կը յիշեցունէ), գուցէ նաեւ իդձ մը տածելով որ ինքն ալ Կոստանդիանոսի պարծանքն ունենայ՝ մեծ աիեզերական ժողովոյ մը ճակատն զիւր անունն դրոշմելով ի յուխտեանական պարծանս, որուն եւ

(1) Կ'աւանդուի թէ Դիոսկորոս ի դարձին յեզիպտոս, բանադրանք արձրկած ըլլայ ընդդէմ Լեւոն Պապի, եւ փոխարէն նաեւ Լեւոն զնա նշոված. մեզ հաւանական չերեւիր այս. զի թէ նդովելու առիթ մը կայր, Տօմարն ըլլալու էր այն, եւ ոչ թէ Լեւոնի անձն. ուստի մեզ ճշմարտագոյն կ'երեւի զպատմութիւնդ յետաընդդէմ կարողալ, այս է որ Լեւոն նախ զնա նդոված ըլլայ. քանզի ուրիշ առիթներէ գիտեմք որ Հոռոմ այդ ժամանակները՝ զիւր գերագահութիւնն ցուցնելու համար անշուշտ, ամեն կողմ զայդ ցոյցն փայլատակելու փութկոտ էր, ինչպէս ըրած է Կեղեցատինոս Պապ, (անշուշտ Լեւոնի խորհրդատուութեամբ) զՆեստոր նդովելով, յետոյ եւ Փելիքս Գ ՊԱկակիրոս, ԿՊօլսի պատրիարքները, եւ անոնցմէ զիոխադարձն ընդունած:

յետոյ յայսնի ակնարկութիւն ըրած այդ ժողովոյն Զ նստին փակման ճառին մէջ , եւ ժողովն ալ անոր արձագանգ տուած . ուստի ելաւ հրովարտակն , եւ տեղն Գաղկեղոն նշանակուելով , որպէս զի կայսեր մօտ ըլլայ : Ստիպուեցաւ Լեւոն տեղի տալ եւ զիւր նուիրակներն ալ յղել՝ շնորհալով իւր Տօմարը , սակայն խրատ տալով իւր Ապրիլ 23 , 451 թղթովն , որ մէկ գիւթողուի վիճելն թէ Եւախքէս «ամբարիշտ» մի էր , եւ կամ թէ Դիոսկորոս «կամակորուցեամբ թիւր դատաստան տեսաւ» . զի այդ խնդիրք իրենց լուծումն առին , կ'ըսէր . պէտք է այժմ ժողովդ երկու երկպառակ կողմերն հաշտեցունելու աշխատի , գլխաւորապէս ներուումն շնորհելով անոնց , որ յանցած են Դիոսկորոսի հետեւելով . — որով կ'երեւի որ Լեւոն կարծած է թէ Դիոսկորոս նոր խնդիր մը ստեղծած էր ինքն իրմէ , որով այժմէն կը նշմարուի որ սխալ հիւանդութեան սխալ դեղ կը տրուէր եւ թէ իւր խրատուն ինքն իսկ պիտի չհետեւէր : Որպէս եւ է . հաւաքուեցաւ վերջապէս յ'8 Հոկտ. վերջնալու ի 1 Նոյ. 451 , Գաղկեղոնեան Դ Տիեզերական կոչուած մեծահամբաւ Սիւնդոտն , աշխարհի խաղաղութիւն պարգեւելու պաշտօնով :

Ինչ որ պատմեցինք ցարդ , այդ ժողովոյն ծագման պատճառն էր . լսենք նաեւ այժմ իւր գործերն եւ հետեւութիւնն դարձեալ պատմադրութեան , որ անոր վրայ կարող ըլլամք ճշգիւ եւ լուսաւոր կերպիւ մեր վերջնական խորհրդածութիւնքն ընել :

Ժողովոյդ բովանդակ նիստերն տասնեւհինգ եղած են թուով , բայց առաջին վեց նիստերն են միայն , որ բուն նպատակին , եւ միանգամայն մեր հետազօտութեան վերաբերեալ խնդրովք կը զբաղին : Յաջորդ մնացեալ գումարմունք՝ օտար եւ երկրորդական նիւթովք աշխատած են , յորս են ինչ ինչ եկեղեցական նոր կանոններ հաստատել :

Գալով ուրեմն մեր մասին , երեք գլխաւոր խնդիրներէ կը կազմուի . Ա . Դատաքննել Դիոսկորոսի (Բ Եփեսոսեան) ժողովոյն գործերը , որ ինքն ալ դատաքննող եղած էր Փլաբիանոսի ժողովոյն :

Բ . Լեւոնի Տօմարն ընդունել :
 Գ . Հաւատոյ Հանդանակ մը յօրինել :
 Հետեւեալք այդոնց պատմութիւնն է . ըստ ժողովոյն Տեղեկագրութեանց , մեզ կարեւոր եղածները քաղելով :

Ա . նիստ (8 Հոկտ.) . Եւսեբիոս Դորիւղեայ եպիսկոպոսն , որ իբր դատախազ Դիոսկորոսի՝ անոր հետ ատենանին մէջտեղն նստած էր , ամբաստանագիր մը կը ներկայացունէ , յորում՝ բաց յայլոյ՝ կ'ըսէր ոչ Դիոսկորոս խառնխուռն մարդիկ ժողովեց կաշառօք , եւ անոնցմով ուղեկաթողիկէ հաւատքը կործանել՝ Եւախքէսի մուշար վարդապետութիւնները ընդունել տալով : Դիոսկորոս հանդարտութեամբ կը պատասխանէ



«ժողովը ոչ իմ , այլ կայսեր հրամանաւ եղաւ . ինչ որ ժողովոյն գործերը կարգացուին եւ քննուին» :
 «Գեմ , » ըսաւ Եւսեբիոս : — «Բայց կը խնդրեմ որ նախ հաւատոյ խնդրքն մէջ տեղ դրուի , որոյ ակնարկութիւն կ'ընէ Եւսեբիոս» : — «Ոչ , ըսին իշխանք , պէտք է որ նախ քու անձիդ վերաբերեալ ամբաստանութիւնք լսուին» :

Իշխանաց հրամանաւ թէոգրետոս (հակակիրեղական) ի ժողով կ'ընդունուի , որովհետեւ Լեւոն Պապ , եւ իւր Պատրիարքն Անտիօքայ՝ զնա արձրկած էին իւր բանադրանքէն . բայց երբ ներս կը մանէ , Եգիպտոսի եպիսկոպոսք (Կիւրեղականք) բողոքոյ ձայներ կ'արձակեն . «Ուղորմեցէք մեզի , մի՛ թողուք որ հաւատքը կործանի . հանեցէք դուրս զայդ նեստորական հրէայն» : Երբ իշխանք կը յանդիմանեն թէ այդպիսի լեզու սամկին անգամ չվայլեր , « Ի պաշտպանութիւն ուղղափառ կրօնից , խօսեցանք » կ'ըսեն : — Իսկ Դիոսկորոս . «Նորա ընդունուիլն , զԿիւրեղ դուրս արտաքսել է» :

Երբ գանդատ ըրին ոմանք թէ Դիոսկորեան ժողովոյն մէջ բռնութեամբ ձեռնադիրներ առնուեցան , պատասխանեցին Եգիպտացիքն . «Ուղղափառ ճշմարիտ Քրիստոնեայն բռնութիւն ի՛նչ է՝ չգիտեր» : Եւ Դիոսկորոս . «Մանաւանդ եպիսկոպոս մարդ : Սակայն ճշմարտութիւն չկայ բնաւ այդ ամբաստանութեան մէջ» :

Կարգացուեցաւ Դիոսկորոսի ըսելն թէ «Կը քննեմ Հարց վճիռները» : Առ որ Եւսեբիոս . «Տեսէք , որ կը քննեմ կ'ըսէ . իմ ըրածս ալ քննել է» : — Դիոսկորոս . «Նա քննել ըսած եմ , եւ ոչ թէ նորաձեւս մտցունել : Ինքն Տէր ըսած է . «Քննեցէք զգիրս» , այլ ոչ թէ փոփոխեցէք» :

Երբ յիշուեցաւ թէ ի ժողովին (Բ Եփեսոսի) «Պահապան հաւատոց» կոչուեր է Դիոսկորոս , «Այդպիսի բան ըսող չեղաւ , » կանչեց եպիսկոպոսներէն մին : — «Լաւ եւս է ըսելնիդ թէ Հոն չէինք» պատասխանեց Դիոսկորոս :

Յիշուեցաւ Եւախքէսի (1) խօսքը թէ Եփեսոսեան տիեզերականը արգիլած է նոր յաւելուած ընել նիկիական Հանդանակին մէջ . «Սուտ է» , կանչեց Եւսեբիոս : — «Քեզ զայն չորս ձեռագրի մէջ ցուցընեմ , » ըսաւ Դիոսկորոս :

Կարգացուելով Եւախքէսի դաւանութենէն թէ «Կը նդովեմ գանոնք որ Քրիստոսի Տեառն մերոյ մարմինը յերկնուստ բերուած կ'ըսեն , » — «Բարի է , ըսաւ Եւսեբիոս . բայց Եւախքէս բնաւ երբեք ըսել ուզած չէ թէ ո՛ւստից եղաւ մարմնաւորութիւնը» : Երբ զնոյն հաստատեցին նաեւ Դիոսկորոսն եւ Բարսեղ (Սելուկիոյ) , կանչեց Դիոսկորոս . «Եթէ Եւախքէս յիրաւի ուղղափառ դաւանութեան հակառակ կարծիքներ ունի , ոչ թէ

(1) Գիտնալու է որ Եւախքէս ներկայ չէր ի ժողովին . Պուղքերիս զինքը հեռացուցած էր ի ԿՊօլսէ :

20483

պատժուի կ'ըսեմ, այլ այրուի: Ես զիմ ուղղափառ հաւատքս կը պաշտպանեմ, ոչ թէ այս կամ այն մարդուն հաւտացածը»: Եւ դատնալով յետոյ առ Բարսեղ, «Կը զարմանամ վրադ, ըսաւ, որ կերպ մը կը խօսիս ի ԿՊօլիս, եւ ա՛յլ կերպ յեփեսոս»: — «Երկիւղ կար վրաս»: — «Ուրեմն առ երկիւղի կը մատնե՞ս հաւատքդ»:

Երբ յիշուեցաւ թէ նաեւ Եւստաթէոս Բերիւզայ՝ իբր Աթանասեան ընդունած է Կիւրղի՝ Մի քննարիւն Բաւնիկ մարմնացեալ խօսքը, Արեւելեանք (Անտիոքեան դպրոցէն), «Չայդ խորհողն Եւսթէոս է, Դիոսկորոս է», կանչեցին: Առ որ Դիոսկորոս զայս նշանական յայտարարութիւնն ըրաւ. «Նզովեալ նա որ այդ խօսքով շփոթումն կամ խառնակումն կամ փոփոխումն կը գնէ (1)»:

Իսկ երբ Երկու քննարիւն բացատրութեան վրայ եկաւ խօսքը, «Թէ առ ի՞նչ դատապարտուեցաւ Փլաբիանոս» պատճառն պարզապէս այս է, ըսաւ Դիոսկորոս. զի երկու քննարիւն կը խոստովանէր յետ մարդեղութեան: Բնաւ տեսած չեմ Հարց գրութեանց մէջ, Աթանասայ, Դրիգորի, Կիւրղի, որ զկնի մարդեղութեան երկու քննարիւն ըսեն, այլ միշտ՝ Մի քննարիւն բաւնիկ մարմնացեալ ըսած են: Ես անոնց վարդապետութեան աշակերտ եմ, եւ անոնցմէ չեմ բաժնուիր: Կ'ընդունիր ըսել Յերկուս քննարիւն, բայց ոչ երբեք թէ ի Բրիստոս Երկու քննարիւնի գոն, [իբր Նեստորական լեզու]: Համարձակ կը խօսիմ. կը խօսիմ իմ հոգւովս, որ պատասխան պիտի տայ Աստուծոյ»:

Եւսթէոս երբ կշտամբեց զԴիոսկորոս իւր ըրած բնութեանց համար իւր ժողովոյն մէջ, «Ես այդ խնդրոյն պատասխանը Աստուծոյ կուտամ», ըսաւ Դիոսկորոս. «Այո, պատասխանեց միւսն վրէժխնդիր օգուով մը. բայց տալու ես նաեւ աստ օրինաց առջեւ: Ինչո՞ւ եկած եմք աստ. զիրա՞ր բարեւելու»:

Հուսկ ուրեմն երբ հաստատուեցաւ որ Դիոսկորոս բռնի զՓլաբիանոս դատապարտած եւ իւր աթոռէն զրկած էր, արքունական իշխանք, որ կայսեր կողմանէ ներկայ էին, յայտարարեցին որ եւ ինքն Դիոսկորոս եւ իւր համախոհ գործակիցք զնոյն պատիժը կրելու են: Այս յայտարարութեան վրայ ահագին ձայնից աղմուկ բարձրացաւ եկեղեցւոյն մէջ, որոց մէջ կը խառնուէր հանդիսապէս, «Սուրբ Աստուած, սուրբ հօր. սուրբ անմահ, ողորմեա մեզ» երգը, եւ գոհութեամբ կը գոչէին. «Ճապակե՛ց աթոռէն Քրիստոս զմարդասպանը»:

Ժողովոյս մէջ Դիոսկորոսի կուսակիցքն էին Եգիպտացիք, Պաղեստինացիք եւ Լիւրիկեցիք. իսկ հակառակ կողմէն էին Արեւելեայք:

(1) Սոյնպիսի ինչ կ'ըսէ եւ առ մեզ Պօղոս Տարոնացի, որ ջերմ Մի քննարիւն բանաձեւին պաշտպանողներէն էր. «Ոչ փոխեցաւ աստուածային բնութիւնն ի մարդկային բնութիւն, եւ ոչ մարդկայինն յաստուածային բնութիւն, այլ երկաքանչիւրքն անարատ մնացին» (Բղդ. Չաւչեան, Բ. 481):

Ասիացիք, Պոնտացիք, Թրակացիք եւ Հոռոմ: Վիճաբանութեանց ժամանակ այս վերջնոց կողմն անցան Պաղեստինացիք:

Բ նիստ (Հոկտ. 10), յորում ներկայ չէր Դիոսկորոս. յետ ԿՊօլսական Հանդանակին եւ Կիւրղի քանի մը կանոնական թղթոց ընթերցման, կարդացուեցաւ վերջապէս Լեւոնի Տոմարը. ասոր ընթերցման առեն՝ քանի մը կէտերու վրայ, ուր Նեստորականութեան շոշորդք կը նշմարէին, Լիւրիկեցի եւ Պաղեստինացի եպիսկոպոսք բացատրութիւն խնդրեցին. Թէոդորեոս եւ ԿՊօլսի նորընտիր պատրիարքն Անատոլ, Կիւրղի համապատասխանող խօսքերը յառաջ բերին: Երբ ընթերցուեց աւարտեցան, աղաղակեց ժողովը, թէ «Լեւոն եւ Կիւրեղ համաձայն խօսեցան», եւ Դ նստին թողին ձեռնագիր գնելը, յետ լաւ մը քննելու խնդիրը:

Գ նիստ (Հոկտ. 13). ներկայ չէին արքունի իշխանք, եւ ոչ Դիոսկորոս. Եւսթէոս նախ, ապա ուրիշ եօթն, ութ վկայք եւս ներկայացան ուրիշ ծանր ամբաստանութիւններ ընելով Դիոսկորոսի վրայ, ամեն սեսակ եղեռնագործութիւն վրան պատմելով (1). ուստի ես կանչուեցաւ նա, բացարձակ մերժեց ներկայանալ յատեան. ուստի ժողովը նախագահին (Պասքասինոս) թողուց ի գործ գնել ինչ որ կանոնք կը հըրամայէին. եւ նա պարտաւոր դատեց զԴիոսկորոս հետեւեալ գլխոց մէջ. Ա. որ զԵւսթէոս՝ հակառակ բանապրանաց նորա մեծաւորին, ի հա-

(1) Խոհական արդի պատմագիր մը այս առթիւ կը յանձնարարէ ընթերցուել Ս. Աթանասայ վարքը, որոյ վրայ եւս ժողովոյ մը մէջ ոչ նուազ ծանր (սուտ) ամբաստանութիւնք եղեր էին: Յիշեմք մեք նաեւ զՈսկերեան, կամ նոյն իսկ զԿիւրեղ. կամ զնոյն իսկ զԹէոդորեոս, որոյ սքանչելի քաղցր եւ մարդասէր համակրելի բարքն արդէն կը փայլի իւր թղթոց մէջ, Կ'աւանդէ որ իւր վրայ եւս ամբաստանութիւն եղած է. թէ Կիւրղի (որոյ հակառակորդն էր ըստ վարդապետութեան) կենաց դաւաճանը եղած է. (Թղթ. 86). Սոյն Թէոդորեոս, որ Դիոսկորոսի եւս համակարծիք չէր, առ նա ուղղեալ թղթոց մէջ կը գրուատէ նորա առաքինի վարքը, մանաւանդ նորա նախնադաս հեղութիւնն եւ պարկեշտութիւնն: Եւ զայս կը հաստատէ կերպիւ իմն այն՝ որ Դիոսկորոս երբ յաքսորս ի Գանգրաս ապրեցաւ մինչեւ երեք տարի (+454), իւր ժողովուրդն անդ յեգիպտոս զնա միայն իրենց օրինաւոր եւ սիրելի պատրիարքն ուղեցին ճանչնալ: Հեղութիւն բարուց չպահանջէր, որ չգիտնայ արիաբար վարուիլ՝ ուր սկզբանց պաշտպանութեան խնդիր կայ: Այլ ինչ է որ այդ պաշտպան կողուող ոգիները երբեմն կորուսած ըլլան իրենց հաւատարակչութիւնը. այդ ամբարիշտ չընէր զմարդ: Դիոսկորոսի հաստատմութիւնն եւ ամուր յարեալ մնալն Եփեսոսեան ժողովոյն եւ Կիւրղի սկզբանց, ամենայն ուղղափառութեամբ, անժխտելի է. բայց եթէ ուղեւայ մէկը խեղաթիւրել իրերը, եւ կամ հարեւանցի, անուշապիր կամ աղանդաւոր մտօք ընթերցուել պատմութիւնը, առանց կարող ըլլալու դատել զստոյցն, եւ իրաց ճիշդ կապը գտնել, այդ ինքեան է գիտելի: Մեք շատ լաւ տեղեակ եմք, որ մոլեռանդութեամբ ջեռեալ յոյն պատմիչք, անխիղճ գտնուած են զամեն ինչ բարեւ, մանաւանդ այն անձին (կամ նոյն իսկ ազգաց) վրայ, որք իրենց աչքին անգամ մը հերեթիկոս ճանչցուած է:

դորդութիւն ընդունելու էր. Բ. Չէր կարգալ տուած Լեւոնի Տոմարը . Գ. Մերժեր էր զԵւսեբրիոս ընդունել ի ժողով . Դ. Ձեւոն պապ յանդգնած էր նզովել . Ե. Հետսած էր ժողովոյն հրամանաց ներկայանալու յատեան : Ուստի դատապարտուեցաւ զրկուել իւր եպիսկոպոսական աստիճանէն եւ քահանայական կարգէն, եւ վճռոյն ձեռնագրեցին ժողովականք :

Դ նիստ (Հոկտ. 17). ընդհանուր համաձայնութեամբ ձեռնագիր կը դրուի Տոմարին , եւ յետոյ , բայց ի Դիոսկորոսէ , նոցա որ իրեն հետ դատապարտութիւն կրած էին Ա. նստին մէջ , ներուճն կը շնորհուի , եւ կը մտնեն ի ժողով :—Կը ներկայանան ապա տասներեք Եգիպտացի եպիսկոպոսք , որք խնդրով մը բացակայ էին ժողովէն . երբ իրենց կ'առաջարկուի որ զԵւսեբէս նզովեն , եւ ձեռնագիր դնեն Տոմարին , առաջնոյն կը հպատակին առանց երկար վարանելու . բայց երկրորդին համար (որ Երկու քննութեան բանաձեւը կը պարունակէր) , գետին ընկած կը խնդրեն ի ժողովոյն , որ չստիպեն զիրենք այդ մասին , զի չեն կարող ընել զայն ինքնազուլիս , քանի որ պատրիարք չունին . ապա թէ ոչ՝ «Գիտցէք , կ'ըսէին , որ ի դարձին մեր յեգիպտոս» մեք ամենքս սպանուուած ենք : Եթէ մեր մահը կ'ուզէք , այժմէն ձեր իսկ ձեռքը խողխողեցէք զմեզ» : ժողովն չուզեց լսել , զի «Աւազակաց» ժողովէն էին . բայց կայսեր ներկայացուցիչը հրամայեցին որ ի ԿՊօլիս մնան՝ մինչև իրենց պատրիարքին ընտրութիւնն :—Ներկայացան այլ եւս ութ եւտասըն վանականք , որք Եւսեբէսի հետեւող եղած էին , եւ ներուեցաւ իրենց , բայց ի մէկէն , որ ամենուն աչքը խայթեց . Բարձուճա անուն մէկը (1) , որ իսկոյն ճանչցուեցաւ թէ նա էր որ վանականաց խուժանը մտուց յեփեսոս յեկեղեցին , եւ ինքն զՓլաբիանոս շարաչար լկեց . «Դուրս , դուրս կորսուի մարդասպանն» եղաւ միաձայն աղաղակն :

Ե նիստ (Հոկտ. 22) . թէ այս նստին եւ թէ մանաւանդ ի Զ-ին (Հոկտ. 23) , ուր ներկայ գտնուեցան կայսրն եւ կայսրուհին , խնդիր եղաւ նոր Հաւատոյ հանգանակ մը յօրինելու ժողովոյն կողմանէ . ժողովն պէտք չտեսաւ . բայց Մարկիանոսի ստիպման վրայ՝ զիջաւ ընել , եւ շարադրուեցաւ զկնի երկար խորհրդակցութեանց :

Այս գործերէն դուրս , եթէ կայ բան մի եւս արժանի մեր յիշատակութեանը , ժողովոյն ի՞նչ կանոնն է , որ Արեւելեան եկեղեցիաց պատրիարքական աթոռոց աստիճանները եւ սահմանները կ'որոշէ , անշուշտ առաջք առնլոյ համար այն աջարձակութեանց , որոց նշանները բաւական սկսած էր զգալի ըլլալ , որոյ վերայ խօսեցանք վերեւ : Այս կանոնին մէջ ԿՊօլիսի պատրիարքական աթոռն երկրորդ կը դասուի՝ ըստ պատուոյ աստիճանի՝ զկնի Հսոմայ , բայց ոչ Առաքելական արքո .

(1) Աստեմանի կ'աւանդէ , որ սա յետոյ յԱսորիս գնալով՝ Եւսեբէսական (!) աղանդը տարածեց յԱսորիս , եւ սորա ալ աչակերտն Շմուէլ , ոյնը բրաւ ի Հայս (') , գորմէ տես եւ ի Չառլեան , Գ . 488-9 :

ըլլալուն սկզբամբ , (որ այն ատեն պէտք էր Անտիօք ամենուն առաջինը համարուել) , այլ Արեւելեան կայսրութեան քաղաքամայրն ըլլալուն պատճառաւ , ինչպէս միեւնոյն պատճառաւ եղած է , յայտարարեցին , Հոռոմայ պատրիարքական աթոռ ըլլալը Արեւմտեան կայսրութեան մէջ : Այս սկզբանց ձեւն հաճոյ չանցնելով Լեւոնի՝ բողոքեց առ կայսրն Մարկիանոս եւ առ Պուղքերիա , բայց պատասխան չընդունեցաւ , եւ ինքն ժողովոյն ամեն մասերն ընդունելով , զայս վերջին կանոնն մերժեց , ինչպէս ցարդ իսկ կը մերժէ Հոռոմ :

Չկայ պատմութեանց մէջ յիշուի , ինչպէս կ'ըսէ պատմագիր մը , երեւելագոյն օրինակ հեղինական խնդակցութեան՝ քան զայն զոր ի վախճան Քաղկեդոնական ժողովոյդ ըրին իրարու Մարկիանոս եւ եպիսկոպոսունք : Գրեթէ յաջորդ օրէն պայթեցաւ փոթորիկն . Կիւրեղականք յԱնտիօք , յԵրուսաղէմ , յԱղեքսանդրիա՝ ոտք ելան միանգամայն ընդդէմ ժողովոյն եւ ընդդէմ Լեւոնեան Տոմարին . ոչ ինչ նուազ եւ յԱրեւմուտս ի Լիւրիկէ (1) . եւ ցարդ որ մէկ եւ կէս հազարեակն ամաց լրացած է , դեռ սպասելու եւք այդ խնդակցութեան կատարմանը : Դար մի եւ աւելի եպիսկոպոսական աթոռք խաղալիք եղան երկուց կուսակցութեանց , որք զիրար կը տապալէին , կը նզովէին , կ'աքսորէին . չխորչեցաւ նաեւ Հոռոմ անոնց մէջ մտնել զիւր խաղը խաղալու եւ աւելի շփոթեցունելու . ասոնց զեղեցիկ օրինակէն խրախուսեալ՝ ետ չմնացին եւ ժողովուրդք , անշուշտ աւելի եռանդեամբ զիրար բզքտելու , մինչև նաեւ կրօնական պատերազմաց անդրանիկը յաշխարհ բերել . եւ երբ վերջ ի վերջոյ ալ ուժաթափ տեղերնին նստիլ ստիպուեցան կռուողքդ , կռուոյ դաշտին վրայ մնաց իւր մրուրը , որ եկեղեցի ընդ եկեղեցու , ազգ ընդ ազգի գժտի , իրարու ատելութեամբ նային , զիրար յարմար անյարմար մակդիրներով նախատեն , — եւ այս մինչև ցայսօր իսկ : Ահա արդիւնք Քաղկեդոնեան ժողովոյն : Բայց մեք թողու՛մք այդ անհաճոյ պատմութիւններն , եւ բուն ժողովոյն արժէքը քննեմք իւր պատմութեան վրայ՝ զոր համառօտեցինք :

Առաջին աչքի զարնողն անդ՝ անակնկալ մի է : Ո՞չ ապաքէն եւ միշտ հաւտացուած է թէ , ինչպէս Նիկիոյ ժողովն Արիոսականութեան , Նիեսոսինը՝ Նեստորականութեան , այսպէս եւ Քաղկեդոնինը՝ Եւսեբէսականութեան դէմ գուճարուեցաւ . բայց ի՞նչ զարմանալի երեւոյթ , որ ի Քաղկեդոն՝ Եւսեբէս , որ աղանդապետն էր , եւ ոչ իսկ երեւցած է , թէ եւ կենդանի էր , եւ ոչ ալ իւր ներկայութիւնն հարցըւած , որ անհրաժեշտ էր անտարակոյս , եթէ իւր աղանդոյն վրայ պիտի վիճուէր , — ինչպէս ի Նիկիա՝ ներկայացաւ Արիոս , եւ կամ յԵ-

(1) Այս նահանգը 431էն ի վեր Հոռոմայ թեմէն անցած էր ԿՊօլիս :

փեսոս՝ նեստոր: Բայց ի՞նչ հարկ ներկայանալու, երբ իւր դատաստանն արգէն տեսնուած, քննուած եւ դատապարտուած էր ի Փլաբիանոսէ ի ԿՊօլիս տարի մը առաջ, իբր տեղական առանձնական աղանդ մը, եւ ինքն Նւտիքէս եւ իւր քանի մը հետեւողք մեղայի եկած, յետս կոչու- մըն ըրած (1), եւ խնդիրը բոլորովին փակուած էր:

Երկրորդ մեծագոյն եւս անակնկալիք. ոչ թէ միայն Նւտիքէսի վը- րայ քննութիւնն չեղաւ, այլ եւ ոչ որ եւ է հաւատոյ վարդապետու- թեան խնդիր յուղուեցաւ: Ժողովոյն գործն եւ նպատակն էր միայն Բ նփեսոսի (Դիոսկորոսեան) ժողովոյն գործերը քննել, որ հաւատոյ կամ աղանդոյ վերաբերեալ խնդիր չէր, այլ լոկ եկեղեցական բարեկարգու- թեան: Շատ է աչքէ անցունել զվճռագիրն եւ անոր գլուխները, զոր ինքն իսկ Պասքասինոս՝ Պապական նուիրակն եւ ժողովոյն նախագահն յօրինեց: — Այդու միանգամայն յօդս կ'ելնէ (երրորդ անակնկալ) միւս այն սխալ կարծիքն, թէ անդ ինքն Դիոսկորոս ընդունած ըլլայ Նւտի- քականութեան դատապարտութիւնն, իբր նորա գրօշակակիրն: Վա՛յ թէ իրօք այդպիսի արատ կամ կասկած ըլլար վրան. բաւ է միտք բե- րել որ ժողովոյն մէջ կը գտնուէր Նւսերիոս Դորիւղացին, որ աչքը չորս բացած՝ այդպիսի որս կը պնտուէր վրան յարձակելու (1), Եթէ ուրեմն ոչ Նւտիքէս, ոչ Դիոսկորոս, հետեւարար՝ եւ ոչ նորա համախոհքն Կիւ- րեղականք, որոց պարտգլուխն էր, հաւատոյ վերաբերեալ նիւթ չէին մատակարարած ժողովոյն դատապարտելի, եւ ոչ որ եւ է հաւատոյ անպամ խնդիր կայր ի միջի, ո՞ւր կը մնայ ուրեմն այն համբաւն թէ Քաղկե- դոնի ժողովն զՆւտիքականութիւն դատապարտեց, եւ թէ՛ ամեն ոք որ զժողովը իբր սուրբ չընդունիր, նովին իսկ գործով Նւտիքական կ'ըլլայ

(1) Նւտիքէս՝ Փլաբիանոսէ ընդունած դատապարտութեանն վար- հուրեալ՝ այնպիսի ուղղափառական թուղթ կը գրէր առ Լեւոն Պապ, աւելցունելով միանգամայն, որ պատրաստ է յետս կոչել եթէ մոլորու- թիւն մը ունեցած է, որ Լեւոն զարմացմամբ կը հարցունէր առ Փլա- բիանոս թէ ի՞նչ է այդ ծերոյն խնդիրը, զի ինքն վիստակար բան մը չգտնէր անոր գրութեան մէջ (թղթ. 20 եւ 21), եւ Փլաբիանոս կը ստի- պուի խնդիրը պարզել իրեն:

(2) Ուղիղ էր ուրեմն մեր ազգային աւանդութիւնը, բստ որում եւ Տարսոնեան ժողովոյն Հարք, բնդ որս եւ Ներսէս Լամբրոնացի (Ի ՈԻԶ = 1177), պատասխանեցին առ Յոյնս:

«Ա. Խնդրեն Հոռոմք. Եզովեցէք զասողսն մի քննարկել ի Քրիստոս, զՆւտիքէս, զԴիոսկորոս, եւ զՏիմոթէոս Կուղ, եւ զամենայն համա- խոհս նոցին:

Պատասխանէ ժողովն. Նզովեմք զՆւտիքէս, զոր եւ նզովեցին (յա- ռաջ) քան զմեղ սուրբ Հարքն մեր: Իսկ զԴիոսկորոս՝ մինչեւ ցայժմ ոչ էր լուեալ (մեր) Նւտիքեայ համախոհ գոլ. մանաւանդ զի ունիմք զԴիոս- մանոսին, որ երբեմն եղեալ ի թագաւորեալ քաղաքդ պատրիարք, առ եկեղեցիս Հայոց գրեաց թուղթ. նա ի բանս իւր զՆւտիքէս միայն, եւ ոչ զայլ ոք յայս աղանդս բամբասէ, եւ մեզ հրամայէ նզովել եւն. (Կղեմ. Կաղան. Ա. 331—345, — Բղդ. Պաղեան. էջ 260):

ստակալի տեսակէն: Կա՞յ քան զայս անկարծելի եւ պակուցիչ պատրանք՝ թէ ասոզաց եւ թէ լսողաց կողմանէ:

Սակայն զայս որ կը լսեն տարակարծիք բարեկամք, գուցէ զարմաց- մամբ մեր երեսն ի վեր հային, թէ ի՞նչպէս կը մոռանամք Լեւոնեան Տոմարը, հաւատոյ վարդապետութեանց կոթողներէն մին (1), եւ կամ նոյն իսկ ժողովոյն Հաւատոյ հանգանակն: — Նախ վերջնոյն համար փութամբ ըսելու, որ ինչպէս ի պատմութեանդ տեսանք, ժողովն զայն, զի բաւական կը համարէր Նիկիա-ԿՊօլիսի Հանդանակը, դժկամակու- թեամբ յօրինեց, լոկ ի ստիպմանէ եւ ի մեծարանս երեսաց Մարկիանոս կայսեր (2), — որ նկատելով անշուշտ՝ որ իւր հաւաքել տուած ժողովն, հակառակ իւր մեծագործ ազակին, շատ չնչին արարած մը ծնած պիտի երեւայ, հարկ տեսաւ յարմար անյարմար՝ արդիւնք մը երեւցունել, որ աչք չլացունէ. Հաւատոյ հանդանակն միայն կրնար ժողովոյ մը գըլ- խոյն լուսոյ պսակն ըլլալ, ինչպէս երեք նախորդ ժողովոց: Եւ ժողովն որովհետեւ իրական առարկայ մը չունէր, եւ Դիոսկորոսի դատէն հաւա- տոյ նիւթ չէր կրնար հանել, դիմեց Լեւոնեան Տոմարին, անտի քաղելու ինչ որ կրնար քաղել, առաջին մասն մ'ալ Նիկիականէն կարկատելով:

Գալով ուրեմն Լեւոնեան Տոմարին, կարելի է որ ինքն յինքեան հրաշակերտ մը եղած ըլլայ իբր աստուածաբանական վարդապետութիւն. բայց այն չէ մեր նկատելին. մեր նկատելին այն է որ ի՞նչ է անոր բանից հիմունքն. ո՞ր խնդրոյ նկատմամբ, ո՞ր խնդրէն նիւթ առած գրուած է այն. եւ ահա կը գտնեմք որ ուրիշ բան չէ, բայց Նւտիքէսի ցնդաբանութեանց հրաշալի հերքումն մը: Բա՛րէ, եւ մեք այժմ իսկ լսե- ցինք, որ այդ ողորմելոյն գիւտերը՝ իւր ստեղծողին հետ մէկտեղ մէջ տեղէն ցնդած աներեւոյթ եղած էր, եւ հնոտի պատմութեանց կարգն անցած, Ըսել է թէ Տոմարդ ամենեւին վերաբերութիւն մը չունէր՝ ոչ ժողովոյն նպատակին հետ, եւ ոչ անոր գործոց, այլ եկամուտ մարմին մը ժողովոյն մէջը մտած, եւ շնորհիւ Մարկիանոսի ժողովոյն գործոց մէջ կարկըտուած (3):

(1) Հաւանականաբար Գրիգոր Ա Պապ (590—604) առ այն ակնարկե- լով, զՔաղկեդոնեանն նախորդ երկից ժողովոց հետ մէկտեղ՝ չորս Աւե- տարանչաց նմանեցունելով, եկեղեցւոյ չորս հիմնական սիւններէն մին կ'անուանէ (!):

(2) «Իսկ կայսրն չհամարէր զայն (Լեւոնի Տոմարը) բնդհանրական որոշումն վարդապետութեանն բաւական, այլ կամէր զի սահմանեցի չհանգանակ ինչ նոր, զոր ապա յանձն առ ժողովն» (Գաթրճեան, Տի- եղեւ. Պատմ. Բ 443):

(3) Կ'աւանդէ պատմութիւնը (տես Գործք ժողովոյն) որ Պասքասի- նոս հակառակ կամաց ժողովոյն պնդած է որ բացարձակապէս կարդացուե- լու է Տոմարդ, զի Տիեզերական Պապէն եւ ի Պետրոսի յարողիէն յօրի- նուած է, բովանդակ եկեղեցիին պարտական է զայն լսել, եւ յաջորդ նստին մէջ Կեկրոպիոս Սերաստուպօլսի եւ Փլորենտիոս Սարգիոյ եպիսկո-

Արդ ինչպէս մարմնոյ մը մէջ անյարմար եւ օտար մարմին մը երբ մխի , որչափ եւ անմեղ կարծուի , բայց կը վնասէ եթէ չարտաքսուի , ոչ ինչ տարբեր նաեւ այդ Լեւոնեան Տոմարն . կրնար ոք զայն իբր հե- տաքրքրական եւ գեղեցիկ դրութիւն մը լսել տալ ժողովոյն , բայց զիւր վնասն ըրաւ , եւ կրկնակի , երբ կարեւորութիւն տրուեցաւ անոր : Վէ՛մ մի էր որ ընկաւ ժողովոյն մէջ եւ վեր ի վայր վրդովեց ջուրը , որ կրնար առանց անոր իւր հանդարտութեան մէջ մնալ . եւ որպիսի՛ վըր- դովումն : Իրօք , եթէ Բաղկեգոնեան ժողովն ահագին ալէկոծումն բե- րաւ յառաջ , եւ սոսկալի ընդդիմութեան բախեցաւ , այդ աննշան կար- ծուած Տոմարն եղաւ պատճառ , եւ իրաւամբք ցայժմ Արեւելեայք (Կիւ- բեղականք) երբ ըստ իւրեանց տեսակէտին՝ կ'եպերեն Բաղկեգոնեան ժո- ղովը , նորա անուան հետ անբաժան կը յիշատակին նաեւ Լեւոնի Տո- մարը : Բայց առ ի՞նչ . միթէ Եւաթէսի մոլորութեա՞ն դէմ գրած ըլլա- լուն համար . — բայց ի՞նչպէս կրնայ ըլլալ այդ , մինչ ոչ Եւաթէսի հետեւող կայր մէջտեղը , եւ ոչ իսկ թերեւս բազմաց ծանօթ այդ անու- նըն իսկ : — Առ ի՞նչ ուրեմն . — Անոր համար միայն , որ այդ գրու- թեան եզրակացութիւնն յայն կը յանգէր , որ Մի բնութիւն Բանին մար- մնացելոյ բանաձեւին տեղ՝ զԵրկու բնութիւն ի միմեկ անձնաւորութեան բանաձեւը կը հաստատէր : Այսինքն՝ կը վերցունէր Կիւբղինը , եւ զԼե-ւոնեանն կը փոխանակէր : Ահա նոր բացուած վէճին գաղտնիքն :

Բայց առ ի՞նչ այդ յանկարծական փոփոխութիւնը : Եթէ առաջինն մոլորական էր , ի՞նչպէ՞ս Եփեսոսեան ժողովն չգատապարտեց զայն , այլ ընդհակառակն այդ ժողովէն ի վեր այդ էր ուղղափառութեան միակ նշա- նաբանն (բայ ի թէ ողորոտեանց ոմանց) , ինչպէս յայտ է նա եւ ի մեծն Պրոկղէ , որ իւր համբաւեալ թղթոյն մէջ որ առ Հայս (Ի 435) զայդ բա- նաձեւն կ'ընդունի , եւ ըստ այնմ կը մեկնաբանէ զիւր վարդապետու- թիւնն , կատարեալ համաձայն Լեւոնեան Տոմարին , զի սա անտի իսկ հիմնական գաղափարները առած է : Եթէ վտանգաւոր էր , ինչպէս կու- զեն կարծել ոմանք , այդ բանաձեւով յեւտիքականութիւն գայթեղու , — ինչպէս գայթած էր Եւաթէս (1) , ի՞նչպէս կ'ըլլայ որ այնքան դարերէ ի վեր Արեւելեան եկեղեցիք (Հայն , Ասորին , Ղփտին , Եթովպացին)

պոք բերան կ'ըլլային առաջարկելու որ կարգացուի : Սակայն դիտելի է որ երբ ձեռնագիր դնելու եւս առաջարկուեցաւ , ժողովը չուզեց բնել զայն մինչեւ որ չքննէ եւ ստոյգ չըլլայ նախ թէ արդեօք այդ կեփայ- եան խօսքը համաձայն է թէ չէ՞ նախորդ ընդհանուր ժողովոց , եւ զայդ քննութիւնն ընելէն վերջը ձեռնագրելոյ զայն այ այս ձեւով յայտարարե- լով . « Այս են հաւատք . Պետոս բերանով Լեւոնի խօսեցաւ » . Կիւբղեղ եւ Լեւոն հանգունատիպ խօսեցան » , — պայման եւ ձեւ , որ շատ յարմար չընծայեցաւ Հռոմէական ճաշակին :

(1) Եւաթէս մը պէտք էր՝ որ միութիւն բառը խառնակուան իմա- նայր , զի յայդմ է միայն վտանգն , եթէ զայդ վտանգ համարելու ըլ- լամք : Սխալ մեկնութեան ոչ բանաձեւն է պատասխանատու , այլ խեղ-

որ այդ Կիւբղեան բանաձեւին հաւատարիմ մնացած են , բնաւ ցարդ այդ կասկածեալ մոլորութեան մէջ դայթած չեն այնքան դարերէ ի վեր (1) : Եթէ թիւր իմացուածով կրնան սխալ հետեւութիւնք հանուիլ , կարծեմք ոչ նուազ վտանգաւոր կրնայ նկատուիլ նաեւ Լեւոնեան բանաձեւն . զի եթէ Մի բնութեան ցարդ Եւտիքականութիւն կրնայ ծնանիլ , Երկու բնութեան արդէն ծնած է եւ արմատացած կ'ապրի դեռ մինչեւ ցայժմ (2) :

— Եստորականութիւնն :

Բայց մեք փոքր ինչ աւելի խորը մտնելով այդ Տոմարին ըրած կամ ուզած փոփոխութեանը , ոչ այլ ինչ նորութիւն կը գտնեմք ի նը- մա , բայց դայս որ Կիւբղեան բանաձեւին մասունքը յետեւառաջ փո- խադրած է , եւ ոչ ինչ աւելի : Պարզ օրինակաւ մը բացատրեմք զայս , որ մի՛ գուցէ տարօրինակ խօսք մը խօսած կարծուեմք ոմանց : Մարդոյ համար , որ ի հոգեոյ եւ ի մարմնոյ կազմեալ է , եթէ կամենայ ոք հին

ճուղ միտքն . ապա թէ ոչ՝ հարկ է որ մեր մարդկային լեզուն ի նորոյ ձուլեմք , — եւ կամ թէ նոյն իսկ Ս . Գիրքը ուղղագրեմք , զի շատ մո- լորութիւնք նորա սխալ մեկնութիւններէն ծագումն առած են :

(1) Մեր Հայկական Եկեղեցւոյ օրինակն յայտնի է մեզ : Զնոյն կը վկայէ եւ Աստեմանի (Հռոմէական Ասորի) իւր Ասորի ազգային եկեղեցւոյն համար . թէ Եւտիքական ազանոցն բնաւ արատ մը չունի :

(2) Ո՞չ այդ Լեւոնեան Երկու բնութիւն ի միմեկ անձնաւորութեան հետեւ բանաձեւն էր , որ իւր յաջորդներէն զմին՝ զմնորիտս Պապ (625-638) մոլորեցուց միակամեան խնդրոյն մէջ , իրաւամբ խորհրդածել ապով նմա , թէ կալէֆն էական անձին գործ է , եւ ոչ թէ անէակ բը- նութեան , որ ընդհանուր կոչուած գաղափարներէն ըլլալով՝ թանձրա- ցեալ գոյութիւն չունի , որով եւ ոչ կալէֆ : — Զսոյն առարկութիւն նա- եւ Ստեփանոս վարդապետ , — ասորեգէտ քարտուղարն մեր Ենտրնալոյ (տես Թուրք առ Յակոբ վարդապետ Ասորի) , — ըրած է առ Թէորիանէ , ներկայ գտնուելով նորա հակաձայնութեանց ընդ Ենտրնալոյ , եւ ի պատասխանի՝ Յօյն օրթոտոքս սասուածաբանն , երևի՛ անպատրաստ , խառն ի խուռն բերնին եկածը դուրս կը թափէ , եւ չուզելով Երկու բը- նութիւն բանաձեւը վտանգի գրած ըլլալ , զայս անհեթեթ գաղափարն յայտնել կը ստիպուի , իբր թէ բնական (բնագրական) զգացմունք մար- մնոյ ինչպէս քաղց , ծարաւ , Քրիստոսի մարդկային բնութեան կալէֆ- րըն եղած ըլլան , եւն . (Բղդ . Պալմեսն , էջ 225-6) : — Կը վրիպիմք մեծապէս եթէ կարծեմք որ աստուածային խորհրդոց գաղտնիքը կարելի է կատարելապէս պարզել , որ եւ է ասրակոյս չվերցունելու չափով , մեր յեզուին տարերօք , որ մեր մարդկային բնութեան յարմարեցուած գոր- ծիքներ են , եւ ոչ անդր քան զայն բարձրագոյն իրաց : Սոցա համար բառեր մասնաւորուած են , բայց միշտ տարտամ , ոչ երբեք իրականին ճշգրիտ համապատասխանող : Ասագոյն է փոքր ինչ իրենց գաղտնեաց մէջ թողուլ , այն որ միշտ գաղտնիք են եւ պիտի մնան : ապա թէ ոչ՝ խորհուրդի չկոչեմք պանոնք այլ եւս : Մարդկային աչք աւելի դիւրաւ կրնան հայել արեգական , մրտանայ՝ քան թէ վճիռ ապակեով : Այդով ապրեցաւ նախկին քրիստոնէութիւնը ընդ գարս , մինչեւ ցման նահա- տակներ եւս տալով . այդ հաւատքով կապրի ցարդ եւ պարզամիտ հաւա- տացեալն , քան թէ աստուածաբանից հնարեալ բնազանցաբանութեամբք , եւ կարծեցեալ պարզաբանութեամբք :

իմաստասիրաց ոճով մը վերացեալ սահման տալ , կարծեմք կրնայ այնչափ կոչել զայն՝ Միտրիւն բաղկացեալ ի յերկուց , որչափ՝ Երկուտրիւն բաղկացեալ ի մի : Կո՞յ այս երկու հակադարձ ձեւերուն մէջ տարբերութիւն մը . կրնա՞յ ոք վիճել թէ առաջինն կամ երկրորդն է ուղիղ , եւ միւսն սխալ : Ճիշդ համանման այդ է Կիւրեղեան եւ Լեւոնեան բանաձեւից տարբերութիւնն . մին միւսոյն յետագարձ ընթերցումն է . երկուքն ալ ճիշդ զմի եւ նոյն խօսքը կ'ըսեն , զմի եւ նոյն միտքը կը յայտնեն : Եթէ տարբերութիւն մը կայ , յայնմ է որ Լեւոնեանն՝ դուրիկ է եւ պարզ , մինչ Կիւրեղեանն՝ խորունկ եւ ճարտարահիւս . բայց այդ ճարտարահիւս ըլլալուն մէջ է բանաձեւին արժէքն (1) , այնու զի յոյժ կարեւոր պէտք մը լցուցած է . այն է՝ նեստորականաց Երկու բնութիւն բանաձեւին դէմ՝ հակադիր ձեւ մը հայթայթել ժողովրդեան բերանը , — կարեւոր յոյժ մանաւանդ այն Արեւելեան աշխարհաց համար , (Եգիպտոս , Ասորիք , Կիլիկիա , ինչպէս նաեւ ի Հայաստան) , որոց շուրջն եւ մէջը դեռ տարածեալ եւ զօրաւոր էին նեստորականք , մինչդեռ Լեւոնեան փոփոխութեամբ , տարբեր եւ աւելի բան մը չըսելէն ի զատ , կարեւոր պայմանէ մը կը զրկուէր բանաձեւն : — Բայց ոչ կը զրկուէր միայն բանաձեւն , այլ եւ կը պղտորէր միտքերն այդ յանկարծական փոփոխումն . զի ինչ որ քիչ առաջ ուսած էին այն ժողովուրդք , իրենց մեծին Կիւրղի առաջնորդութեամբ , իբր Եփեսոսեան վարդապետութիւն՝ ըսել Մի բնութիւն , Երկու ըսելն այժմ՝ անհնար էր որ իբր նեստորական լեզու չնկատուէր , անշուշտ անիմանալի մնալով իրենց այն նուրբ զանազանութիւնն , թէ մին բաժանեալ կ'ըսէ , եւ միւսն անբաժան : Բաց աստի , ո՞ կարող պիտի ըլլար զայդ նոր բանաձեւն քարոզել , եւ որո՞վ հեղինակութեամբ՝ Կիւրղի հաւատար գալու չափ , այն մոլեռանդն ժողովրդեան , որ իբօք կրնար քարկոծել իսկ զքարոզիչն իբր նեստորականութեան սերմանացան . (Յիշեմք զայն լալազին աղերսը զոր ի Քաղկեդոն կ'ընէին Եգիպտացի եպիսկոպոսք , երբ ժողովն կը ստիպէր իրենց ձեռք դնել Տոմարին) (2) : Թողումք յիշել նաեւ արժանապատուութեան կէտր , ոչ անհնական խղճի միայն՝ որում լաւ գիտակից էին Կիւրեղականք , որ իրենց բանաձեւը շարունակելով , բնաւ նոր վարդապետութիւն մը մուծած չէին , քան ինչ որ յառաջնմէ ուսած էին , այլ եւ իրենց պաշտած

(1) Ոմանք չեն ընդունիր որ միբնութենական բանաձեւին ծագումն յԱթանասայ ըլլայ , թէ եւ զայն Կիւրեղ յանուն Հարց ի մէջ կը բերէ առանց անուն տալու : Չայդ կարծիս ունեցող քննադատք , զայն գըրուածքները յորս Մի բնութիւն բանաձեւն կը գտնուին յանուն Աթանասայ , անհարազատ կը համարեն . եւ այս հաւանական կ'երեւի եւ մեզ : Բայց թէ անոր նախագիծ ձեւն կայր նախ քան զԿիւրեղ , կը տեսնուի նաեւ Գրիգորի Նազիանզու այս խօսքին մէջ . «Ոչ երկու եղեալ , այլ մի յերկուց լինել յանձն առեալ» :

(2) Յիշեմք եւս մեք մեր նախահարց ի՞նչ կերպիւ ընդունելն ուրացեալ , թէև առերես , նախարարները : (Նղիշէ) :

Կիւրղի յարգանաց եւ պատուոյն նկատմամբ , որոյ դէմ պիտի մեղանչէին՝ իբր մոլորեցուցիչ առաջնորդ երեւցունելով , այն որ արդէն ծայրայեղ Քաղկեդոնականք զնա Ապողինարեան սոյոր էին անուանել : Կ'արժէ՞ր ուրեմն այդ անկարեւոր փոփոխութեամբ , այդպիսի ծանր երկմտութեանց եւ շիտթութեանց առիթ տալ , ինչպէս արդիւնք իրացն յետոյ հաստատեցին (1) : Չունէի՞ն ուրեմն իրաւունս Կիւրեղականք ջերմապէս հակառակելու եւ բողոքելու ընդդէմ Տոմարին , եւ ընդդէմ Ժողովոյն իսկ , որ զայն , լոկ առ երեսպաշտութեան , Հանգանակի ձեւոյ մէջ մտուց , — որ կեզժ էր եւ նուաստացուցիչ , անգոյ եւ չնչին աղանդոյ մը կարեւորութիւն տալով , եւ Տիեզերական ժողովքէ մը հերքուած ըլլալուն պատիւը : Անիրաւ չգտնուեցա՞ւ եւ Լեւոն իւր պաշտօնակից եղբարց վրայ անկարեւոր «լուծ մը դնելով» , հակառակ իւր Առաքելապետին ոգւոյն (Գործք , ԺԵ , 10) , ինքն ի Հոռոմ նստած յանհոգս , ուր նեստորականութեան երկիւղ չկայր , եւ անտարբեր էր մի բնութիւն ըսել կամ երկու : Տեղի չկա՞յ մեզ կասկածելու ուրեմն , որ այդ փոփոխութիւնն աստիճան մի էր նմա՞ իւր դիտեալ նպատակին բարձրութեանց հասնելու : Լեւոնի Տոմարին յանձնաւ եւ անյարմարապէս մուծանելն ի Քաղկեդոնեան ժողով , առիթ տուաւ երկրորդ տարօրինակ երևութի մը , — Եւտիքական անունը մասնաւորել Կիւրեղականաց , որ յոյժ ծանր հետեւանքներ ունեցաւ թէ բարոյապէս եւ թէ գիտնականապէս : Մէկ կողմանէ այդ դժբաղդութեան , իբր Եւտիքականութեան հերքումն , հանդիսապէս կարդացուիլն ի ժողովին , եւ անոր համեմատ Հաւատոյ հանգանակ մը յօրինուիլն , եւ միւս կողմանէ նոյն ժողովոյն մէջ Դիոսկորոսի դատապարտուիլն , թէ եւ բոլորովին տարբեր պատճառաւ : — այս կրկին գէպք այնպէս իմն իրարու հետ շողուեցան եւ տուրուեցան դաղափարաց մէջ , իբր թէ Դիոսկորոս աղանդապետ մի էր

(1) Թէ արդարեւ քանի՞ վտանգաւոր կրնան ըլլալ երբեմն այդպիսի նորութիւնք բոտ պարագայից , ուրիշ օրինակօք ալ ցուցնեմք : Այժմ որ Արեւմտեան (Հոռոմէական) եկեղեցւոյ մէջ սրբոց արձանք որ կը կանգնուին , եւ Մաղոնեաներ , որոց մինչեւ նորիւրեկ չըջազգեստ հագուեցունել , թէև անմեղ կերպով , եւ այնպէս թափօրներու մէջ շրջեցունել , կարելի՞ էր միթէ ընել զայն՝ երբ տակաւին յոտին էր կապալապ հեթանոսութիւնն : Ո՞չ ապաքէն սոյն նկատողութեամբ առ մեծն կարոյոսիւ (754-814) Փրանկաց եկեղեցին մերժեց է տիեզերական ժողովը (Ի Նիկիոյ) հանդերձ իւր վճռովն Բնդդէմ Պատկերամարտից , որովհետեւ իրենց զբաղի Գերմանաց մէջ զեռ կուսապաշտութիւնն կենդանի էր : — Գարձեալ՝ Հոռոմայ եկեղեցին միով տեսակաւ որ այժմ կը հաղորդէ , կարող էր կամ խոհեմութիւնն էր ընել զայն այն դարուն , երբ Մանիքեցի կոչուած աղանդաւորք , որք զինին չար ոգւոյ ստեղծուած է ըսելով՝ ջրով կը պատարագէին . եւ դա՞ ինքն Լեւոն Ա Պապն չէ՞ր , որ այդ վտանգին պատճառաւ՝ հրաման հանեց որ ժողովուրդն անպատճառ երկու տեսակաւ հաղորդուի , որպէս զի ուղղափառք զանազանութիւն յաղանդաւորաց , որ յցուած էին այն ասեմները ի Հոռոմ . (Գաթրճեան , Տիեզ. Պատմ. Բ , 431) : Ըսեմք թէ Լեւոն Պապ երկու կշիռ եւ երկու չափ ունէր իրեն խոհեմութեանը :

Նւտիքէսի հետեւող , եւ իւր բոլոր համախոհ Կիւրեղականք՝ կատարեալ Նւտիքականք , եւ թէ Քաղկեդոնի ժողովն Լեւոնեան Տոմարաւ թէ՛ զանոնք եւ թէ՛ զՆւտիքականութիւնը ի միասին դատապարտեց : Ահա Մինոտաւրեան նոր եղջերուաքաղ մը , որ թէ եւ ոչ նուազ քան զհին առասպելն անձոռնի եւ մտացածին , բայց այնքան տիրացաւ համոզմանց վրայ եւ արմատացաւ , որ դարեր պարեցաւ , եւ մինչեւ ցայժմ իսկ այդ կարծեաց վրայ հաստատուած են ամեն Եկեղեցական պատմութիւնք եւ ամեն լուրջ գրութիւնք , իբր անտարակուսելի ճշմարտութիւն մը . — թէ եւ հակառակ վկայեն այնմ՝ հաւատարիմ վաւերագիրք , անժխտելի իրողութիւնք , նաեւ բանն ինքնին , անտի յառաջ եկած յայտնի անտեղութիւնները տեսնելով :

Սակայն ցաւալին այն է որ այս եղջերուաքաղն՝ սգիտութեան կամ անմտադրութեան ծնունդ չէր , այլ դիտաւորեալ չարամտութեան գիւտ , եւ վաւերագրաց նայելով՝ նորա դարբնողն եղած է նա ինքն Մարկիանոս : Այդ վաւերագիրքն են իւր իսկ երկու հրովարտակքն , զորս իսկ եւ իսկ զկնի փակման ժողովոյն (1 Նոյ. 451) դեռ կէս տարի չանցած իրարու վրայ հանել ստիպուեցաւ . (15 Մարտ եւ 28 Յուլիս 452) , երբ շուարեալ կը լսէր , որ փոխանակ իւր ակնկալեալ խաղաղութեան , ահագին փոթորիկ մը փրթած է ժողովոյն դէմ , յնգիպտոս , ի Պաղեստին եւ յԱսորիս : Այդ հրովարտակաց մէջ , խոովարարքն , որք Կիւրեղականք էին , առաջին անգամ ըլլալով կը տեսնեմք , որ Եւսիփական եւ Ապոդիւրեան կը կոչուին : Արդ ի՞նչպէս մեկնել զայս նորութիւնը . մինչդեռ գրեմք որ Մարկիանոս ինքն անձամբ իսկ ներկայ եղած էր ժողովոյն , եւ քաջ սեղեակ էր , որ անդ ոչ Նւտիքէս կայր , եւ ոչ Նւտիքական ոք . եւ թէ Նւտիքականութիւնն՝ ոչ այդ հեռու աշխարհաց մէջ ծնած էր , այլ եւ գահանիստ մայրաքաղաքին մէջ իսկ , վանքի մը շրջափակին մէջ , եւ թէ անդ արգիլուած խեղդուած էր նա՝ իբր երկու ամօք յառաջ Փլաբիանեան ժողովով . ի՞նչպէս կարելի էր այդ յանկարծական հեռուոր փոխադրութիւնն , որ հակառակ իսկ մեծին Կիւրղի ահագին ազդեցութեան որ կը տիրէր այն կողմերն , այդ նոր վարդապետութիւնն քանի մը ամսուան մէջ արմատ գտնար , տարածուէր եւ զօրացած ըլլար այնքան , որ անոնց անկարգութիւնները զսպելու համար հազարաւորաց բանակներ զրկելու պէտք ըլլար : Ո՞ր բերանն էր այն , ո՞ր այդ հրաշագործ քարոզիչն , որ Պենտակոստական նոր սքանչելիք մը կը կատարէր բիւրաւորաց յանկարծական դարձովն , եւ պատմութիւնը անոր անունը մենէ ծածկած ըլլայ : Ո՞ր բանաւոր միտք ուրեմն , կրնայ բնաւ երկբայել որ այդ Նւտիքական անուան ստեղծողն եւ նենգող՝ նա ինքն Մարկիանոս ծերն էր , որոյ այնչափ էր քաղաքագիտական իսկ կարողութիւնն , որչափ աստուածարանական գիտութիւնը , եւ ըստ իւր խելաց՝ ուղեց այդ հնարիւք իւր կազմած ժողովոյն թէ՛

նանրութիւնը ծածկել (ինչպէս ըրած էր Հաւատոյ հանգանակին առթիւ) , եւ թէ՛ միանգամայն հակառակորդաց զօրութիւնը բեկանել անուանարկիչ յորջորջմամբ մը , — անշուշտ համոզուելով իսկ թէ այդպիսի խաբէութիւն մը կ'առաքինանայ ի փառս եւ ի պաշտպանութիւն ըլլալով ուղղափառ հաւատոյ . սակայն անտես կ'ընէր որ այդ անարգական անուամբ աւելի եւս կը գրգռէր ոգիները , եւ լոկ վիճական բանակաբեր՝ կը դառնայր ատելութեան եւ թշնամանաց :

Անշուշտ թէ այդպիսի խարդախանք մը , երբ բարձր տեղերէ մանաւանդ տեղալու ըլլայ , սիրով կրնդունի ամբոխն , որ արդէն կը սիրէ խաբուիլ , եւ անդիմադրելի ճշմարտութիւն մը կը դառնայ ստուութիւնն՝ բերնէ բերան արշաւելով . եւ այնպէս ալ եղաւ : Անշուշտ այնմ հաւատացող պիտի սեպուէինք ըլլալ եւ մեք , մանաւանդ երբ դարերու յարատեւ վկայութիւնք ալ զայն ամրապնդած են ցարդ , թէ Դիոսկորոս եւ իւր Կիւրեղականք կամ Միքնութեանականք բովանդակ իրօք Նւտիքականք էին եւ են , եթէ անդուստ նոյն իսկ պատմութիւնն մեզ այժմ զայդ հին խարդախանքն ակնյայտնի չխայտառակէր : Կ'արժէ որ անոնցմէ երկու նշանաւորները յառաջ բերելով , վերջ ասմք մեր խորհրդածութեանց :

Առաջին . Յաջորդք Մարկիանոսի , որ այս հակառակութեանց հըրդեհին մէջ , ըստ իւրեանց քաղաքականութեան կամ համոզման , մերթ միոյ եւ մերթ միւսոյ կողման կուսակցելով բռնական միջոցներով , փոխանակ զայն մարելու՝ աւելի եւս կարծարծէին , անոնցմէ մին , Զեոնոն կայսր (474-491) , աւելի զգաստ գտնուելով քան զայլոսն , ուղեց հաշտարար միջոցի մը դիմել , խիթալով մանաւանդ թէ մի՛ գուցէ այդ չփոթութիւնք պատճառ ըլլան ի վերջոյ ձեռքէ կորսնցունելու Եգիպտոսի պէս ընտիր աշխարհ մը : Գտաւ իրեն համեմատ խորհրդակից մը զԱկակիոս պատրիարք ԿՊՕԼԻ (471-489) , այր խորագէտ եւ կարող . նորա թելադրութեամբն եւ գրչաւ՝ հրովարտակ մը հանեց (ի 482) , զհռչակաւորն Հեկոսիլոն (Դաչն միութեան) , զոր ուղղելով առ Կիւրեղականս որ յնգիպտոս եւ այլուր , կը յատարարէր թէ նոքա որ զայդ հրովարտակն ընդունին եւ ձեռնագրեն , իբր ուղղափառ պիտի ճանչցուին եւ ընդունուին : Եւ էր այն ոչ ինչ այլ , բայց Հաւատոյ դաւանութիւն մը՝ կատարելապէս ուղղափառական , յօրինեալ առաջին երեք մեծ ժողովոց Հանգանակներուն վրայ , խառնելով նաեւ Քաղկեդոնականին իմաստները , եւ կը վերջանայր քաղցր յորդորականաւ մը , որ գան միանան ի գերկա Մօր Եկեղեցոյ , «որ բազկատարած կը սպասէ զիւր որդիան ժողովել» , — միայն զայս հնարագիտութիւն ի գործ դնելով , որ ի նմա ոչ Քաղկեդոնի ժողովն կը յիշուէր իբր հեղինակութիւն , ոչ Լեւոնի Տոմարն , եւ ոչ ալ երկու բանաձեւոց բացառութիւնք կը գործածուէին : Հրովարտակը երբ հասաւ յԱրեւելս , ընդունելութիւն մեծ գտաւ ի Կիւրե-

զականաց , եւ նոցա երկու պարագլուխ պատրիարքունք , Պետրոս Մոն-
 գոս (Թլուաւ) Աղեքսանդրիոյ եւ Պետրոս Կնափեցի (Թափիչ) Անտիո-
 քայ , առաջինք եղան իսկոյն իրենց ձեռնադիրները գնելու , (ինչպէս
 ըբին քիչ յետոյ նաեւ Հայք առ Բարգենիւ) : Մեր նիւթէն դուրս է
 աւելցունել որ այս խոհական եւ հաշտարար ձեռնարկն՝ վերջ ի վերջոյ
 ապարդիւն մնաց . զի մինչդեռ քրթնիջիւնք կը լինէին երկու կուսա-
 կցութեանց ծայրայեղներէն , մին (Ակոմիտեան վանականք ի ԿՊօլիս ,
 որոց ազդեցութիւնը մեծ էր առ Քաղկեդոնիկս) առարկելով թէ իրենց
 ժողովոյն հեղինակութիւնը անտես եղած էր (1) , եւ միւսն՝ ընդհակա-
 ոակն թէ յայտնի եւ բացարձակապէս նշովուած չէր այն (2) , անդուստ
 ելաւ Հոռոմ կատարեալ պաղ ջուր լեցուց ամենուն վրայ . զի Փելիքոս Գ
 Պապ (483-492) պատճառելով թէ Հոռոմայ գիտակցութեամբն եղած չէր
 հրովարտակդ , եւ թէ յիշուած չէր Լեւոնի Տոմարն , (թէ եւ Ձեռնոն առ-
 անձին նամակաւ յայտնած էր նմա իւր մտաց խորհուրդը) , ոչ միայն
 նշովեց զՀենոտիկոնն իբր «ամբարշտութեան սերմանադան» , այլ նշու-
 վեց նաեւ զԱկակիոս՝ իբր նորա սկզբնապատճառն . հետեւաբար՝ ի պա-
 տախանի Ակակիոս ալ զնա նշովեց , եւ հերձուածն որ երկու էր , դար-
 ձաւ երեքի . Յոյն եւ Լատին եկեղեցիք ալ ընդ միմեանս գծտեցան , որ
 տեւեց 33 տարի : — Բայց մեր այս պատմութեան վրայ անդրադարձու-
 նելիքն այն է , որ եթէ Կիւրեղականք՝ իրօք Նւտիքականք ըլլային ,
 ինչպէս կ'անուանէր Մարկիանեան հրովարտակն , ի՞նչպէս հնար էր , որ
 նախ ինքն Ձեռնոն , որ հաշտարար կարելի միջոց մը կ'ուզէր գործածելու
 այնպիսի դաւանութեան ձեւ իրենց առաջարկէր , որ բոլորովին հակա-
 ոակ էր եւ անհաշտ ընդ Նւտիքականութեան , — եւ միւս կողմանէ ալ
 ի՞նչպէս կ'ըլլար որ ամենաջերմ եւ պարագլուխ Կիւրեղականք , — ինչ-
 պիսի էին Մոնղոսն եւ Կնափեցին , զորս ցարդ Քաղկեդոնիկք՝ իբր մոլե-
 գին Եւսիփակսն կ'անուանեն , — սիրայորդոր ձեռնադրեն այդ ուղղա-
 փառ հրովարտակին (3) :

(1) Չի այս կերպ միայն կը յիշուէր այն . «Եթէ ոք այս ուղիւ
 վարդապետութեանց հակառակ ինչ ուսուցանէ , այժմ կամ յայլ ժամա-
 նակս , ի Քաղկեդոն եւ կամ յայլ ժողովս , նշովեալ եղիցին» :
 (2) Այդ Հենոտիկոնի չհպատակող Կիւրեղականք՝ բաժնուելով իրենց
 պատրիարքներէն , Անգլուխի կոչուեցան :
 (3) Սոյն թիւր գաղափարաւ սողորեալ նաեւ Թէորիանէ յ'ժ'ի դա-
 րու , թէ Հայոց եկեղեցին եւ իւր Ծնորհալի գլուխն , միբնութիւնա-
 կանք , թանձր տեսակէն Նւտիքէսի հարազատ աշակերտներն են , Նիկոն
 թնուրեան վկայութեանց խոշոր ծրար մը անութը զարկած , հաւաքեալ
 ի յունական Հարց , փութադ ի Հոռոմիլայ՝ զանոնք մեր Հայրապետին՝
 առջին թափելու , իբր Նորոքիւն մը դաս տալու . ժամերով փրփրալէն
 ետեւ՝ երբ կը յուսայր որ իւր ունկնդիրն՝ ալ դարձի եկած ըլլայ , պահ
 մը կանդ առաւ եւ դարձաւ հարցուց Ծնորհալու . «Հայրապետ սուրբ ,
 զատնք լսելով՝ ի՞նչ կը խորհիս այժմ» : — «Ի՞նչ կը խորհիմ , պատաս-
 խանեց մեր ծերունի Կաթողիկոսն հանդարտ հեգնութեամբ մը . կը խոր-

Գամք երկրորդին . կը գահակալէ մեծն Յուստինիանոս Ա (327-365) .
 սա եւս զկնի բազմամեայ բազմադիմի փորձերու , ըղձացեալ հանդարտու-
 թեան չհասնելով , կը դիմէ Ձեռնոն կայսեր խորհրդոյն , բայց աւելի
 գործնական եւ վճռական հնարք մը խորհելով : Ընդհանուր ժողով մը
 գումարել տուաւ ի ԿՊօլիս (Մայ. 533) 163 եպիսկոպոսօք , որ յետ նախ
 Կիւրեղականաց հաճոյ գործ մը կատարելու , — որ էր Թէոդորոսի , Թէ-
 ոդիտոնի եւ Իբասայ ինչ ինչ գրուածքները (որ Եկեղեցական պատմու-
 թեան մէջ Երեմ գրուիս անուամբ կը ճանչցուին) նշովել տալու , իբր
 Նեստորամիտս (1) , — ժողովն իւր Հաւատոյ հանգանակին մէջ երկու
 նշանաւոր գլուխներ ալ մտուց , է եւ Ը կանոնները . առաջինը՝ Նիկոն
 թնուրեան բանաձեւը , եւ երկրորդը՝ Մի թնուրեան Բաւիլի մարմնացեղոյ
 բանաձեւը , իբր կատարելապէս ուղղափառականս կը յայտարարէին ,
 եթէ ոք զանոնք ուղիղ մտօք , ինչպէս սուրբ Հարք , դաւանելու ըլլայ՝
 ըսելով (2) : Չայս ժողով , որ յԱրեւմտեան Եկեղեցոյ ընդունուած չէր՝

հիմ որ զայդ ամենը հաւաքելու համար՝ քանի մը տարիներ անցուցած
 ըլլալու ետ» . (Բղդ. առ Պաղմեանի , էջ 212) :

(1) Այս առթիւ էր , որ ի մէջ բերուեցաւ եւ կարգացուեցաւ այն
 նամակն զոր Հայք (առ մեծն Սահակաւ) ուղղած էին առ Պրոկղ՝ իբր վը-
 կայութիւն թէ Թէոդորոսի Մոպսուեստիոյ գրութիւնք նորա են արդա-
 րեւ , եւ Հայք եւս կ'ամբաստանեն զնա իբր Նեստորամիտ :

(2) Չայս երկու կանոնները Չամչեան (Բ . 265) այս կոկ ձեւով
 կ'ամփոփէ .

«Կանոն է . Եթէ ոք յասելն երկուս բնութիւնս՝ իմանայ զբաժա-
 նումն բնութեանց , եւ ոչ խոստովանի զմի Տէր Յս . Կս . կատարեալ
 աստուածութեամբ եւ կատարեալ մարդկութեամբ՝ անշփոթաբար միա-
 ւորեալ , առանց աստուածութեան փոփոխելոյ ի մարդկութիւն , եւ
 մարդկութեան յաստուածութիւն , նշովեալ եղիցի :

«Կանոն Ը . Եթէ ոք ի խոստովանելն զմիութիւն յերկուց բնու-
 թեանց , եւ կամ յասելն՝ Մի բնութիւն բանին մարմնացելոյ , ոչ իմա-
 նայ այնպէս՝ որպէս Հարքն ուսուցին , այսինքն՝ թէ յաստուածային
 բնութեանէ եւ ի մարդկային բնութեանէ միով անձնաւորութեամբ է մի Կս . ,
 այլ իմանայ թէ այնու եղեւ մի պարզ էութիւն աստուածութեան եւ
 մարմնոյն , եւ կամ շփոթմամբ մի գոյութիւն , նշովեալ եղիցի» :

Այդ է եւ Ը կանոնաց ողոյն ճշդիւ համաձայն՝ քանի՞ յստակու-
 թեամբ նաեւ մեր Ներսէս Լամբրոնացի՝ իւր Ատենաբանութեան մէջ ի
 Տարսնեան ժողովին ի 1178 , զնոյն երկու բանաձեւներն իբրեւ ուղ-
 դամիտս կ'ընդունի , զայս ուղիղ տեսութիւն նախ սկզբունք գնելով ,
 թէ «Չիք ի ծագս աշխարհի եկեղեցի Քրիստոսի , որ ոչ զՔրիստոս՝ աս-
 տուած եւ մարդ դաւանէ . եւ եթէ այս այսպէս է , ապա ընդէ՞ր այս-
 քան հակառակութիւնք ի մէջ մեր բռնացեալ» . (Տպ. Վենետ. 1838 , էջ
 146) . եւ թէ վէճն բանաձեւներու լոկ վէճ է . «Բառս իմն եւ քննու-
 թիւնս ընդդէմ միմեանց ուսոյց (բանասրկուն չար) բաղբաղել» . (էջ 145) .
 որով , կ'ըսէ , մի կողմն կը կարծէ որ Նիկոն թնուրեան ըսողք՝ Նեստո-
 րապէս կը բաժնեն , եւ միւսն՝ թէ Մի թնուրեան ըսողք՝ բոտ Նւտիքէսի
 կը շփոթեն , (էջ 149 եւ 151) , եւ ապա կ'անուան ինքն զայդ երկու բա-
 նաձեւներն զատ զատ մեկնաբանել ըստ իւրեանց ուղղափառ մտաց ,
 (էջ 149-151 , եւ 151-156) : Վերջնոյն համար կ'ըսէ այսպէս . «Առնումք

Երկը գլխոց դատապարտութեան պատճառաւ , Գրեգոր Ա Պապ (590-604) ընդունել առաւ , եւ այն է ցարդ իբր Ե տիեզերականն ճանչցուածն ։ Յետոյ նաեւ Մարտինոս Ա Պապ (649-653) իւր Ա Լատերանեան ժողովոյն մէջ (ի 649) որ ընդգէմ Միակամայց , վերոյիշեալ երկու կանոններն վերահաստատեց՝ իւր Ե եւ Զ կանոնօք . (Մանսի , Ժ . 1154) : — Արդ մեր խորհրդածութիւնն այս պատմութեան վրայ՝ այս է . թէ այս կրկին ժողովոց մէջ յանկարծ այդ մեր երկու հակադիր բանաձեւներուն մէջտեղ բերուիլն միանգամայն , եւ իբր ուղղափառական վաւերացուիլն , յի՞նչ այլ կրնայ մեկնուիլ , բայց նախ թէ այդ երկու բանաձեւոց խնդիրն իրօք երկու հակառակութեանց գծաութեան խնձորքն էին , (ինչպէս ցուցընել ուղեցիկնք զայն իւր համառօտ ամբողջ պատմութեամբն) , եւ հարկ էր վերջապէս զայդ գծաութիւնը բառնալու համար՝ զերկուսն եւ միանգամայն սրբացունել , որ կերպիւ ինն Քաղկեդոնականաց յանդիմանութիւն մի է , — եւ թէ , երկրորդ , անիրաւ էր Կիւրեղականաց վերայ գրուած արասն , թէ զմի բնութեան բանաձեւն դաւանելով , նովին իսկ գործով՝ Եւտիքականք էին (1) :

զմի բնութիւն ասել Բանին մարմնացեղոյ՝ անճառ խառնմանն հոչակ ընդդէմ Եւտորի , եւ բան ասելով եւ մարմնացեղաչ , զյատկութիւն այլ եւ այլ բնութեանցն հաստատեմք զսրբոյն Կիւրղի : Եւ ոչ ասեմք ի վերայ Բանին մարմնացեղոյ զմի բնութիւնն՝ զյատկութիւն էութեանցն շփոթելով , որպէս նորայն կարծեն , այլ ըստ անճառ միաւորութեան կրկուցն ի մի անճառութիւնն» եւն . (էջ 153) : Այսպէս Լամբրոնայի ըստ իւր Եկեղեցւոյն վարդապետութեան ուղիղ մեկնութիւնը կուտայ , հաւանականաբար առանց տեղեկութիւն ունենալու վերոյիշեալ ժողովոյն կանոնաց . այդ թէ ոչ՝ յետ երկու բանաձեւոց երկուստեք ուղղափառական ըլլալը հաստատելու , չէր հետեցուներ եւ յորդոր տար իւրոցն՝ որ տեղի ասն Հոռոմոց , եւ անոնց բանաձեւը ընդունին , այլ նաեւ Հոռոմոց կը յիշեցունէր որ ըստ իրենց մեծի ժողովոյն որոշման , ուղիղ էր նաեւ Հայոց բանաձեւը , եւ հարկ չկայր փոխել տալու , քանի որ ուղղափառապէս կ'իմանան զայն : — Թէ Յոյնք եւս նոյն ժի գարուն մէջ այդ ժողովոյն որոշումն մոռացութեան տուեր էին , յայտնի կը տեսնուի թէ Երիւրանէի ըսելէն առ մերս Շնորհալի , թէ «Մի բնութիւն ասել ի Քրիստոս՝ արգելեալ է» . (Պաշտեալ , էջ 216) : — Բայց մեզ այնքան զարմանալի չէ թէ Երիւրանէի սգիտանալն , որչափ Պաշտեալին անգիտանալը , որ զիւր այդ Պաշտեալին Կարողիկե վարդապետարեան ի Հայ մատեանն գրելու ատեն (այ . վեհնա , 1878) ուչ դրած չէ Չամչեանի Պատմութեան , ուր այդ կանոններն յիշատակուած են , որով եւ թէ Երիւրանէի հակաճատութիւնն ինքն՝ իբր հրաշալի քարոզութիւն Քաղկեդոնական՝ բերնին ջուրերը վազցունելով պատմելէն վերջը , կը յաւելու . «Ինչպէս կը բաղձացուէր՝ յուսացեալ նպատակին հասան . քանի մը հաւատոյ գլուխները պարզուեցան , զլիաւորաբար Քրիստոսի երկու բնութիւններն ընդունուեցան , եւ Քաղկեդոնի ժողովոյն՝ ուրիշ տիեզերական սիւննոցոսաց հաւասար՝ հաւասար ընծայուեցաւ» . որ բոլորովին սրիալ է . (Անդ . էջ 32) :

(1) Եթէ Կիւրեղականաց Երկու բնութիւն ըսելու հակադրութիւնը Քաղկեդոնականք՝ իբր Եւտիքականութեան նշան կը համարին , յիշելու

Իսկ թէ ցայժմ Քաղկեդոնականք , անտես ընելով այդ երկու մեծ ժողովոց որոշումն , տակաւին կը յամառին Եւտիքական՝ անգոյ իրի մը անուամբ՝ անուանել Մի բնութեան դաւանող Արեւելեան եկեղեցիները , եւ առ ձեռնհարազ գրել , այդ գաղտնեաց մեք չեմք հասու . հարկ կ'ըլլայ նոցա դառնալ հարցունել , որ բացատրեն մեզ պատճառն :

1. Դիւչէն , Հոռոմէական քահանայ եւ համալսարանական դասախօս Աստուածաբանութեան ի Սորբոն Պարիսի , յետ սոյն այս մեր խընդիրն քննելու եւ նշմարելու որ վէճն աւելի բառական էր քան այլ ինչ , առանց թէեւ բուն գաղտնեաց յստակ հասու ըլլալու , զիւր խօսքը այս մանրավէպով կը փակէ . «Արիստեան կուռոյն ատեն , քանի մը ուղղափառ եպիսկոպոսներ Մեծին Աթանասայ քովը հաւաքուելով՝ վէճի բռնուեցան . ոմանք յԱստուած մի անձն կը գնէին , եւ այլք՝ երեք . մտիկ ընելով հայրապետը բաւական ատեն , յանկարծ դարձաւ , «կը տեսնեմ , ըսաւ , սիրելիք , որ խօսքերնիդ տարբեր է , բայց մտքերնիդ նոյն . ուրեմն տուէք համբոյր իրարու , եւ երթալք սիրով ի Տէր» : Եւ կը յարէ Դիւչէն . «Շատ մեծ աստուածաբաններ ունիմք , բայց ոչ եւ Աթանաս մը» :

..

Իսկ ի՞նչ կ'ընէր այս երկար Քաղկեդոնեան կուռոյն ժամանակ մեր Հայաստանեայց Եկեղեցին , — ժամ է մեզ հարցունել այժմ , ըստ մեր գրութեան բուն նպատակին : Պատասխանն սակայն յայտնի է : Վսեմադոյն պատերազմ մը կը պատերազմէր մենիկ միայնիկ , ոչ անգոյ Եւտիքականութեան դէմ սպառաղինեալ , եւ զաշխարհ իրար անցունելով՝ քրիստոնէական սէրը քայքայելու , այլ ընդգէմ ահեղ Պարսկական բռնութեան , քրիստոնէական կրօնքը հաստատելու : Բայց , աւա՛ղ , չկըրցաւ զիւր զոներն մինչեւ ցվերջ փակ պահել այդ սնտաի եւ անիմաստ կուռոյն համաճարակ արշաւանաց դէմ . ցաւով կը տեսնեմք որ այդ վեհ եւ կտրիճ պատերազմողք կը ստիպուին վերջապէս իջնել իրենց բարձունքներէն , եւ կերպ մը գոհնիկ կոխներու մէջ խառնուիլ . սակայն ուրախ եմք նկատել , որ անդ եւս իրենց արժանապատուութիւնը կը գիտնան պահել իրենց արիական հաստատամտութեամբ :

Չգիտեմք թէ կա՞յ հարկ երկայնաբանել այս մասին , քանի որ մեր նախորդ պատմութեանց ընդհանուր նկարագիրն եւ խորհրդածութիւնք , զոր եւ գիտամբ մանրամասնեցինք , ինքնին լուեկայն մե-

կն որ այդ ընդդիմութիւնն՝ նախ քան զԵւտիքէս , նոյն իսկ Կիւրեղի օրէն կայր , որ երբ սա առ սէր խաղաղութեան զիջաւ զայդ բացատրութիւնն շնորհել Յովհաննու Անախոքայ , Արեւելեայք , իւր կուսակիցքն՝ սկսան խոժոռ հայիլ վրան : (Բղդ . Գաթրճեան , Բ , 427-8) :

ծաւ մասամբ գուշակել կուտան , թէ ի՛նչպէս վարուեցան , կամ պէտք էին որ վարուած ըլլան մեր նախնիք այդ խնդրոյն նկատմամբ , իրենք ալ մի եւ նոյն պայմանաց մէջ զանուելով , յորում էին կիւրեղականք : Սակայն եւ այնպէս կան ինչ ինչ մասնաւոր պարագայք , զորս հարկ է մեզ , մեր ուսումնասիրութիւնը ամբողջացունելու համար , առանձինն քննութեան առնուլ , գոնէ համառօտիւ . մանաւանդ այն կէտերը , որոց մասին ոչ փոքր սխալ տեսութիւններ եղած են մեր արդի պատմչաց կողմանէ , մասամբ օտար աղբեցութեանց անզգուշաբար հետեւելով :

Նախ առաջին գիտելիքն եւ ճշգրտելիք այն է , որ Հայոց Եկեղեցին , որ ի Միբնութենականաց է , զայդ բանաձեւն՝ ոչ թէ , ինչպէս կը կարծեն գոթա , շատ յետոյ քան զՔաղկեդոնեան ժողովն ընդունեցաւ՝ վէճերու առթիւ եւ հակառակութեան ոգւով , այլ ընդհակառակն՝ իսկ քան զժողովը՝ Եփեսոսականէն ընդունած է զայն առ մեծն Սահակ հայրապետաւ : Ծանօթ է մեր աղբային պատմութեան տեղեակ եղողներուն , որ թէ եւ մերայինք ներկայացուցիչներ չունեցան Եփեսոսի ժողովոյն մէջ , բայց նոյն ժողովոյն գործք եւ կանոնք , թարգմանչաց ձեռքը՝ որ ի կողմիս կը գտնուէին յայնժամ , վաղ բերուեցան առ մեծն Սահակ եւ Մեսրօբ , եւ այդ առթիւ թղթակցութիւնք եւս տեղի ունեցան ընդ մերան եւ ընդ գլխաւոր Հարս նոյն ժողովոյն , կիւրեղ , Պրոկղ , եւն . (Բղդ . Կորիւն , Խորեն .) : Այդ թղթոց միոյն մէջ , որ պահուած է ցարդ , Պրոկղի առ Հայս գրած նշանաւոր նամակը (ի 435) , յայտնապէս ի մէջ կը բերուի Մի բնութիւն Բանին Վարմնացեայ (1) բանաձեւը , հանդերձ մեկնաբանութեամբ , որ անկասկած կ'ընէ զմեզ թէ իրօք ծանօթ էր բանաձեւը մեծին Սահակայ , եւ ի նմանէ եւ յիւրոցն ընկալեալ , իբրեւ կիւրեղեան եւ Պրոկղեան աւանդունի , մանաւանդ երբ կը տեսնեմք եւս ,

(1) Գիտելի է որ Պրոկղի յունարէն բնագիրն՝ կիւրեղեան բնութիւն (Քի՛ւսիւ) բառին տեղ՝ հիլպո՛ւսսսիւս ունի . թէ արդեօք այդ ընթերցուածքն Պրոկղի է թէ Քաղկեդոնիկ ընդօրինակողի մը , աւելորդ է քննել . մեզ այն յայտնի է որ Ե գարու Մեսրօբեան դպրոցին ներքի չըլլալով զայդ բառն եւրալիստիքի թարգմանել , բնութիւն բառն պատշաճագոյն համարած են , (ինչպէս՝ Երբայեցուց թղթոյն մէջ ալ եռարիւն թարգմանուած է . «Որ է լոյս փառաց եւ նկարագիր էութեան նորա» . Ս . 3) : Այդ բնութիւն բառը ոչ թէ միայն կիւրեղեան էր , այլ ինչ նաեւ ճիշդ կը համապատասխանէր հեղինակին մտքին , որ է՝ բունն , իսկն , ինքնութիւն , որ եւ ըստ յետոյ՝ անձնաւորութիւն , լատ . natura առումն՝ կրկնորդ եւ յետորդ նշանակութեամբ է : — Աստուածաբանական խնդրոց վրայ վիճողք , ոչ պատմականին միայն , այլ եւ լեզուականին հմուտ պէտք են լինել երկուստեք , եւ իրենց թեթեւ գիտութեամբն՝ չմեղադրեն մեր հին հարց բացատրութիւնները , եւ կասկածներ չհանեն անոնց հաւատոցը վրայ : Բայց թէ յետորդ ազատութիւնն խեղաթիւրած է ուրեք բառերուն իմաստը , այդ ազգային է յանցանքն , եւ ոչ թէ բնագրին . ապա թէ ոչ՝ կը ստիպուիմք նաեւ զՍ . Գիբսո մեղադրել եւ սրբադրել :

որ սոյն բանաձեւն կը գտնուի նաեւ այն Հաւատոյ դաւանութեան մէջ , զոր Քաթրճեան Հայրն՝ յիւրում Հանգանակ հարաւոյ մատենական մէջ (Վեհնա , 1891 , էջ 35-37) ի մէջ կը բերէ յանուն Աթանասայ , անդստին ի Ե գորէ թարգմանեալ , ինչպէս անտարակուսելի կ'ընէ լեզուն . անդ կը կարգաւոր . «Իսկ Որդի մարդոյ բոս մարմնոյ , ոչ երկուս բնութիւնն՝ զմին երկրպագելի եւ զմին աներկրպագելի , այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացեալ , եւ երկրպագեալ հանդերձ մարմնով իւրով՝ միով երկրպագութեամբ» : Արդ այս պատմական եւ վաւերագրական վկայութեանց վրայ տեղի չնհար երկրայութեան , որ Հայք ի սկզբանէ անտի եփեսոսականք (կիւրեղականք) էին , եւ ջերմ հակառակորդք ընդդէմ նեստորականութեան , (Բղդ . Թուղթ Հայոց առ Պրոկղ , նաեւ առ Չամչեան քաղուածոյ , Բ , 261-264 , ուր կը տեսնուի եւ Աստուծաբանական աւերարեան (Odium theologicum) կծու լեզուն) , եւ թէ ստոյգ էր մերազնեայց յետոյ ստէպ յեղեղելն , — ինչպէս նաեւ ի Մանազկերտեան ժողովին , (Չամչեան , Բ , 352) — թէ ի նախնեաց եւ ի թարգմանչաց աւանդաբար ունիմք զայդ բանաձեւն , եւ անոնցմէ հաւատարմաբար մինչ առ մեզ հասած է այժմ երկար դարերէ անցնելով (1) :

Արդ այս միբնութենական պայմանին մէջ կը գտնուէր Հայաստանեայց Եկեղեցին այս բանաձեւից նկատմամբ , երբ Քաղկեդոնեան ժողովն Երկու բնութեան բանաձեւն կը հռչակէր : Պատմութիւնն կը լռէ մեզ բոլորովին թէ ե՞րբ եւ ի՞նչ կերպիւ հասաւ անոր համբաւը ի Հայաստան , եւ թէ ի՞նչ ընդունելութիւն դասաւ ի Հայոց : Այս լռութեան վրայ՝ եւ թագրութեանց կը մտնեն մեր արդեան պատմիչք , Չամչեան եւ Պալճեան , բոլորովին անհաւանական : Վերջինս մանաւանդ իւր Պատմութիւնն

(1) Չամչեան վկայութիւն մը ի մէջ կը բերէ (Պսն . Հայ . Ա . 527) ի Վահանայ եպիսկոպոսէն Նիկիոյ (ի 862) , իբր թէ Մեծն Սահակ Աշտիկէտայ ժողովոյն մէջ (Սորեն . Գ . 61) նեստորականաց խնդրոյն առթիւ՝ Մարդեղութեան խորհրդոյն վրայ ատենարանելով , զայս բանաձեւն արտաբերած ըլլայ . «Սոստովանիմք զՔրիստոս յերկուց բնութեանց մի անձնաւորութիւն եւ մի զէմ եւ մի Քրիստոս» : Բացարձակ անընդունելի է որ Քաղկեդոնական բանաձեւը իրօք Սահակայ ըլլայ : Սահակ կրնար համաձայն վարդապետութիւն մը ընել , բայց Եփեսոսական լեզուաւ : Ինչպէս հարկ համարած է իւր ունկնդրաց հաղորդել զանոնք զիւրաւ համոզելու համար . իսօքին իմաստը , եւ ոչ թէ բուն բառերը՝ յառաջ բերած է : Այս առթիւ ի զէպ կը համարիմք երկուց ժողովոց՝ Եփեսոսի եւ Քաղկեդոնի , մեզ նիւթ եղած բանաձեւները աստ ի մէջ բերել , հանեալ իրենց Հանգանակներն .

Եփեսոս . «Քանզի եղէւ միաւորութիւն երկուց բնութեանց , եւ վասն այնորիկ խոստովանիմք մի Քրիստոս , մի Որդի եւ մի Տէր» . Քաղկեդոն , որ կը բառնայ միաւորութիւն կամ միութիւն բառը , եւ կ'ըսէ . «Զմի եւ զնոյն Քրիստոս Որդի , Տէր միեմին , յերկուց բնութեանց անշփոթ , անփոփոխ , անբաժանելի եւ անանջատելի ճանաչեմք» . (Մանսի . է , 116) :

Կարողիկեայ վարդապետներէսն ի Հայս տարօրինակ մատենին մէջ, աւելի տարօրինակ ջերմեռանդութեամբ, (առանց ուշ դնելու կամ անդրադարձած ըլլալու բանաձեւոց խնդրոյն), կ'ուզէ կարծել թէ «Հայք Քաղկեդոնի վճիռներն անմիջապէս ընդունեցան՝ մերժելով Եւտիքական հայհոյութիւնը... քաջ տեղեակ ըլլալով նոյն Սիւնհոգոսին բոլոր ընթացքին, վճռոցն եւ սահմանադրութեանց» (էջ 14), եւ թէ անով ընդամս 90 խաղաղութեամբ ապրելեն ետեւ, յանկարծ օրին մէկը՝ կէս մը ի գրգռութենէ ցեղ ցեղ Եւտիքական աղանդաւորաց, եւ կէս մը Հեկոսիկոն («ննգաւոր հրովարտակին») աղղեցութենէն պատրեալ (էջ 17), կ'ընդլզեն, եւ միանգամայն ի դուրս կը վտարեն իրենց եկեղեցիէն Քաղկեդոնն ալ, Լեւոնն ալ, պարագլուխ կենալով այդ անակնկալ նորաձեւութեան՝ Ներսէս Բ Սշտարակեցին (527-535), (կամ ըստ Չամչեանի՝ Բարբէն) «որ ոչ հովիւ ոչխարաց էր, այլ վարձկան, մանաւանդ թէ դայլ յափշտակող, որ առաջին անգամ բաժնեց իւր հօտն ի միութենէ եւ ի հաղորդակցութենէ կաթողիկէ Եկեղեցոյ եւ Հռոմէական աթոռոյ (!) ։ Անհնարի՛ն ապիրատութիւն, որ այնչափ մոլորութեանց սկիզբն, վէճ դայթակողութեան եղաւ Հայաստանեայց ժողովրդեան հետագայ դարուց մէջ», եւն. եւն. (Անդ, էջ 19)։ Ահա պատմութիւն մը, որում եթէ ներելի է նմանութիւն մը բերել, հազուստ մի է ներսը դուրս, դուրսը ներս ըրած՝ միամիտ ընթերցողի մը հագուեցունելու (1)։

Մեք աւելորդ կը համարիմք երկար վիճել այդ ենթադրութեանց հետ. միայն զայս կը հարցունեմք. կա՞յ իրօք Հայոյն բնութեան մէջ այնքան զիւրաշարժ փոփոխամտութիւն, մանաւանդ ի կրօնականս, որ այդպէս նախ յեփեսոսեանն, ապա անտի անցնի ի Քաղկեդոնականն, եւ ի Քաղկեդոնականէն յանկարծ յետս ոստնու դարձեալ յեփեսոսին, կամ ըստ Պալճեանի, աւելի անհեթեթ, յԵւտիքականութիւն, առանց

(1) Այս ճարտարութեան օրինակք բազում են, բայց հատ մը եւս մէջ բերեմք մեր դիտողութեան ստուգանութեանը համար։ Թէորթանէ Երեւանի հակաճառութեան ատեն՝ ներկայ գտնուելով Գրիգորիոս Կալսկոպոս մը, տեսնելով որ Յունաց (Քաղկեդոնեան) բանաձեւն հակառակ չէ Հայոց (Եփեսոսեան) բանաձեւին, «ես ալ ուրեմն Հռոմ եմ» կը կանչէ։ Զայս Հռոմ բառը Պալճեան՝ իւր թարգմանութեան մէջ Հռոմեական կը յեղուէ, եւ զայն գլխադիր տառիւք (էջ 214), որք, կարծեմք, շատ տարբեր բառեր են հայերէն լեզուի մէջ՝ սկսեալ յեղիշեան դարէն, եւ այժմ մանաւանդ բոլորովին հեռու իմաստներու կը տանին ընթերցողին միտքը. եթէ շրակնութեամբ չկարգայ։ Այս մասին իրաւունք ունէր թարգմանիչը զայդ անմեղ այլայլութիւնը գործելու, իւր մատենին նպատակէն զայդ կէտն ալ համաձայնեցունելու համար. զի եթէ այդ Գրիգոր Կալսկոպոսն իւր Շնորհալուոյն հետ, այդ ԺԲ գարուն մէջ Հայ եկեղեցիէն Հռոմ եկեղեցին անցնէր, — որ Հռոմէականէն երկու դարէ ի վեր բաժնուած էր, — մէկ խեղճութենէ ուրիշ խեղճութեան մէջ պիտի ընկալ ըլլար, եւ երկու բնութեան դաւանութիւնը զայն արդիւնքն յառաջ բերած պիտի չըլլար, ինչ որ կը սիրէ ցուցնել մատենագիրն ամեն ճգամբ

խակ բնաւ ճանչելուն, թէ ո՞ է Եւտիքէսդ, Եթէ Հայք իրօք, ինչպէս կ'ըսէ «քաջ տեղեակ էին Սիւնհոգոսին բոլոր ընթացքին», շատ աւելի լաւ քան զմեզ հմուտ ըլլալու էին թէ ի՞նչ կը նշանակէին այդ «Եւտիքական հայհոյութիւնքն», զոր ինչպէս տեսանք, բոլորովին առասպելական հիւսուածք էին, որով Պատմիչը զոյն այդ ենթադրութիւնն իսկ ինքնզինքն կը ջրէ։ — Բայց Պալճեան զիւր այդ պատմական շէնքն իրողութեան մը վրայ կը կանգնէ. ի Գործս Քաղկեդոնի ժողովոյն՝ ժողովոյն ժողովականաց թուոյն մէջ եւ նորա Հանդանակին ձեռնագրողաց մէջ կը գտնէ քանի մը Կալսկոպոսներ, որք զիրենք՝ Եպիսկոպոս Թեոդոսիոսի, Հայոց Մեծաց, Երիզայ, Արճիշոյ, Եկեղեաց, Վաղարշապոսի կ'անուանեն։ Աներկբայ աննշան ինչ չէ այս պարագայս. սակայն չեմք կրնար համոզել զմեզ, որ լուրջ ներկայացումն եղած ըլլայ այդ Հայոց եկեղեցւոյն կողմանէ, այնպիսի ժամանակ՝ յորում քան զԴիոսկոբոսի մը դատն, շատ աւելի մեծ եւ կարեւորագոյն դատ մը կայր լուծելու առանին սահմանաց մէջ։ Եթէ դոքա մինչեւ իսկ եղած ըլլան ազգային Կալսկոպոսներ, եւ ոչ յոյն կամ յուսածէս, — ինչպէս կասկածել կուտան անոնց՝ Մանասէ, Պապիսա, Պրոկի, Կիրակոս անուանքն, գըլխովին աննմանք նոյնաժամանակ Աշտիշատայ ժողովոյն հայկական անուանց՝ որ առ Եղիշէի, — աննշան եւ երկրորդական անձինք եղած ըլլալու են, եւ կամ զրկուած թերեւս առ մարգահաճոյ քաղաքավարութեան առ Մարկիանոս, յուսալով տակաւին քաղաքական օգնականութիւն անկէ ընդունելու (Բղդ. Եղիշէ, Գ)։ Իրենց ներկայութիւնն ալ ի ժողովին՝ բնաւ գրաւական մը չէր կրնար համարուել, որ ի նոցա դարձին՝ ազգային եկեղեցին պիտի «անմիջապէս ընդունէր ժողովոյն վճիռները»։ առանց զանոնք նախ վերաքննելու, իւր անկախութեան իսկ իրաւունքով։ Բայց զայս վերջին կէտն հարկ կը տեսնեմք փոքր ինչ աւելի լուսաբանել, որ ամեն տարակոյս վերնայ։

Տեղեկացուցինք արդէն ի սկզբան բանիցս, թէ երբ տեղ մը աղանդ մը երեւար, Եկեղեցական ժողով կը գումարուէր տեղական՝ զայն քննելու եւ գատելու համար. եթէ ընդարձակագոյն ըլլար աղանդոյն ճարակուն, ժողովն եւս անոր համեմատ ընդարձակագոյն կը լինէր։ Զկնի ժողովոյն, վճիռքն կը հաղորդուէին պատրիարքական եւ գլխաւոր Կալսկոպոսական աթոռոց. եւ սոքա այդ վճիռները իրենց ժողովովն վերաքննութեան կ'առնուին. եթէ կարեւոր ինչ էր իրենց համար եւ ընդունելի, կ'ընդունէին, թէ ոչ՝ լուծութեամբ կը թողուին ի բաց, եւ կամ երբեմն՝ հակառակ վճիռ եւս կ'արձակէին։ Այսպէս Գանգրայ ժողովն (Եբբ 380) իւր սիւնհոգոսական թղթով կը ծանուցանէր առ Հայս՝ Եւստաթէոսի Սեբաստիոյ Կալսկոպոսին կրած գատապարտութիւնը, — եւ Արեւելեան Կալսկոպոսաց ժողովն (371-2) որ ընդ նախագահութեամբ Ս. Բարսղի, ուր ներկայ էր նաեւ մերս Ներսէս Մեծն, կը ծանուցանէր առ

Դամասոս Ա. Պապ ի Հռոմ՝ իրենց վճիռը Արիոսական վէճին վրայ : — Այսպէս եւ ինքն Դամասոս՝ զիւր վճիռն Ապոզինարեան աղանդոյն վրայ (յ՛378) կը հաղորդէր յԱնտիոք , եւ սա իւր ժողովովն կ'ընդունէր զայն ի յաջորդ տարին , եւ յամին 381 կը վերահաստատէր վերջնականապէս Բ Տրեզերականն ի ԿՊՕլիս : — Սոյնպէս էր եւ Արմէս քաղաքի Ա. ժողովն յ՛314 , որ վերաքննութեան կ'առնոյր Մելքիատէս Պապին ըրած որոշումները , ընդ որ Դոնատեանք գոհ եղած չէին , եւն . եւն . :

Այս ժողովոց կարգին մէջ քան զամենքն ընդարձակագոյն կը համարուէր Տրեզերական կոչեցեալքն , որ անշուշտ տեսականապէս կը նըշանակէ՝ որ համաժողով գումարումն ըլլայ բոլոր քրիստոնէական աշխարհներէ եւ եկեղեցիներէ , ինչպէս եղած է միայն Ա. Նիկիոյ ժողովն (325) . սակայն ի գործնականին բոլորովին տարբեր նշանակութիւն ունէր , նոյն իսկ Տրեզերական բառէն սկսեալ : Այդ բառն , որ յունական œcuménique բառին թարգմանութիւնն է ի մեզ , ոչ այլ ինչ կը նշանակէր , բայց Հռոմէական կայսրութեան աշխարհաց սահմանը (1) , այնպէս որ այդ անունը կը տրուէր ոչ միայն միահեծան Հռոմէական կայսրութեան , այլ նաեւ անոր երկու՝ Արեւելեան եւ Արեւմտեան՝ բաժանեալ մասանց զատ զատ : Արդ ճիշդ այդ առմամբ կը յորջորջին եւ ընդհանրական ժողովք — այնպէս որ , Ա. եւ Բ ԿՊՕլիսի ժողովները , ո՞ր միայն յԱրեւելեան կայսրութեան եպիսկոպոսներէն գումարեալ են , դարձեալ Տրեզերական կը կոչուին , իրենց ընդհանուր ընդունելութիւնը յեկեղեցեաց շատ ամօք յետոյ ըլլալով՝ եւ այն մասնաւոր վերաքննութեամբք : Այսպէս եւ առ Արեւմտեայ Տրեզերական կը կոչուի Ա. լատերանեան ժողովն (649) , թէ եւ Արեւմտեան կայսրութեան սահմաններէն միայն գումարեալ (2) : — Թէ այդպիսի սահմանափակ գործադրութիւն մը ունեցած են միշտ Տրեզերական կոչուած ժողովները յայտ է եւ անտի որ այդ ժողովոց հրաւիրանք միշտ կայսերական հրովարտակօք եղած են , (գուցէ ծախուց պատճառաւ , որ յարքունուստ կը լեցուէր , կամ թէ՛ զի չկայր միահեծան պատրիարքութիւն մը) . ինչպէս Նիկիականն ը

(1) Բղղ. «Ել հրաման յԱզոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն աիեղերս» (Ղ.կ. Բ. 1) : — Զնոյն եւ մեր Շարականն մեծին Թէոփոսի համար կոչած է . «Տրեզերական իշխանութիւն» , — երեւի ի յունէն թարգմանեալ , կամ յունական երգի մը հետեւելով :
 (2) Այս առմամբ է որ նաեւ ԿՊՕլիսի պատրիարքութիւնն Յունաց , ի զարէ անտի , յեցեալ Քաղկեդոնեան ժողովոյն որոշման վրայ , (Տրեզ վերեւ) , զինքն Տրեզերական պատրիարք սկսած է անուանել , — յայտ է Արեւելեան կայսրութեան իմաստիւ . որոյ գէժ հակառակած են Հռոմայ Պապք , իրենց զայն յետոյ անշուշտ վերապահելու մտօք : Սոյն սահմանափակ իմաստիւ նաեւ մերս Ներսէս Լամբրոնացի զնոյն աթոռն «Տրեզերաց արքունական աթոռ» կը կոչէ . (Ասէն .) , եւ կամ Քաղկեդոնեան ժողովոյն ասեն՝ Աղեքսանդրացիք զԼեւոն Պապ կոչած են . «Տրեզերական պատրիարք (Արեւմտեց) եւ եպիսկոպոս մեծին Հռոմայ» :

մեծէն կոստանդիանոսէ , Ա. ԿՊՕլիսին՝ ի մեծէն Թէոփոսէ , Եփեսոսին՝ ի Փոքրէէն , եւ Քաղկեդոնին՝ ի Մարկիանոսէ . նոյնպէս եւ յաջորդ չորս Տրեզերականքն . եւ ինքն իսկ Լեւոն Ա. Պապ , երբ կը փափաքէր ընդդէմ Բ Եփեսոսին (Իրիսկորոսի) ուրիշ ժողով մը գումարել յիտալիա , կը դիմէր առ Վաղենտիանոս Գ եւ առ Թէոփոս Բ կայսերս : — Բայց աւելի զարմանալին կայ . այդ Տրեզերական ժողովոց վճիռք հաւատոյ եւս՝ դարձեալ կայսերական հրովարտակօք կը հոչակուէր : — Իսկ այն քրիստոնեայ աշխարհաց համար (ինչպէս էին Հայք , Պարսք եւ Եթովպացիք) , որ Հռոմէական կայսրութեանց սահմաններէն դուրս էին , բնականաբար նոցա ոչ այդ կայսերաց հրաւէրն կը զօրէր օրինաւորապէս , եւ ոչ յետոյ վճուոց հրովարտակն եւ նոքա իրաւունք ունէին զայդ Տրեզերական ժողովս , ոչ իբր ընդհանուր նկատել . այլ տեղալիսն , եւ իրենց ներկայութիւնն , — ինչպէս եղաւ միայն ի Նիկիայն , — բոլորովին կամայական էր , եւ հրաւէրն եւս որ եղաւ ի կոստանդիանոսէ առ մերս Տրդատ , բոլորովին բարեկամական կը նկատուի :

Կը հետեւի ուրեմն ըսել այս տեղեկութեանց վրայ , որ այդ Տրեզերական ժողովոց վճիռները վերաքննութեան գնել Հայոց եկեղեցոյն կողմանէ , — զի սորա վրայ է առանձինն այժմ մեր խօսքը , — կրկնակի գլխով օրինաւոր էր . իբր անկախ եւ ազատ եկեղեցի թէ՛ եկեղեցականապէս , եւ թէ՛ քաղաքականապէս : Իրօք ալ կը տեսնեմք որ նախ ինքն Ա. Գրիգոր Լուսաւորիչ՝ զայդ անկախութիւնն ի գործ դրած է՝ Նիկիոյ ժողովոյն վճիռները ի վերաքննութիւն առնելով , յոր կերպիւրեմն ակնարկութիւն է համառօտախօս պատմչին ըսածն . «Սուղ ինչ գլուխըս յինքենէ ի կանոնս ժողովոյ յաւել , վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին» . (Սոր . Բ , 90) : Սոյնպիսի ինչ ըրած է եւ մեծն Սահակ Եփեսոսի ժողովոյն նկատմամբ , ինչպէս կը մակարերուի իւր թըղթակցութիւններէն ընդ Եփեսոսական Հարս (1) : Եւ միթէ տարբեր վարուած են եւ այլ եկեղեցիք՝ նոյն իսկ Տրեզերական ժողովոց նկատմամբ : Յիշեցինք վերեւ թէ ինչպէս Ա. ԿՊՕլիսի Տրեզերականն՝ վերաքննութեամբք ընդունուած է յԱրեւմտեայ . ո՞չ եւ Բ Նիկիոյ ժողովն (է Տրեզերականն յ՛787) երկար ընդդիմութիւններով եւ վէճերով ընդունուած է յԱրեւմուստ , յոմանց եւ իսպառ մերժուած : Ո՞չ եւ ինքն Լեւոն Ա. Պապ , ընդունելով հանդերձ զՔաղկեդոնի ժողովն , որոյ նախադաս էր իւր իսկ նուիրակն , յետոյ մերժեց իւր առանձին ժողովովն անոր ի՞նչ կանոնն . (Տես վերեւ) :

(1) «Autonomie et séparation ne sont pas synonymes. Bien que le culte du particularisme ait parfois grandement uni à la conservation de l'unité chrétienne, on aurait tort de croire que cette unité est incompatible avec de légitimes diversités, exclusive de toute vie locale organisée» . L. Duchesne : Églises séparées. 1898 .

Այս տեսութեանցս եզրակացութիւնն ուրեմն յայն կ'ածէ զմեզ , որ Հայք նաեւ Քաղկեդոնեան ժողովոյն վրայ իրենց վերաքննութիւնն ընելու թէ իրաւունք ունէին եւ թէ պարտաւորութիւն , « ի զգուշութիւն իւրեանց վիճակին » զի հնար էր , որ անյարմարութիւն մը ունենար , եւ կամ , — ինչպէս տեսնուեցաւ այլուր , — մինչեւ իսկ յուզումն յառաջ բերելու պատճառ ըլլար յԱզգին : Եւ զայդ օրինակով իրաւունքն ի գործ իսկ դրած կ'երեւին , որով եւ կրնամք գուշակել թէ ի'նչ եղած է իրենց ժողովոյն խորհրդածութիւնքն եւ որոշումն : Երբ ժողովոյն լուրը , հաւանականաբար նաեւ պաշտօնական Արձանագիրք՝ ժողովոյն կողմանէ հասան ի Հայս , մեր երանաշնորհ Հայրապետք ի ժողով գումարեցան ի քննութիւն , եւ նկատելով որ ժողովոյն գործն (որ էր Դիոսկորոսի ժողովոյն գործերը քննել) , բնաւ կարեւոր խնդիր մը չէր Հայոց համար , եւ հաւատոյ վարդապետութեան մասին (որ եղած էր ստիպմամբ Մարկիանոսի) նոր ինչ չէր բովանդակեր , այլ վերագարծութիւն էր նախորդ երկից ժողովոց , եւ յաւելուած մասն ալ որ կայր՝ հանդերձ Լեւոնեան Տոմարաւ , հերքումն էին անծանօթ եւ աննշան Եւտիքէս անուն յոյն վանականի մը ցնորաբանութեանց , — որպիսի աղանդներ եւ հերքումներ այլ եւ այլ ժողովներէ շատ եւ շատ լսած էին , որ այդ դարերուն Հռոմոց ակտորակին նորաձեւութիւններն էին , նիւթեր էին , որ բնաւ զՀայն ոչ կը շահագրգռէր , եւ ոչ օգուտ մը անկէ կրնար քաղել զայնս ընդունելով : Իսկ զալով Երկու քննութեան բանաձեւին փոփոխման , գուցէ ուշադրութեան անգամ չառին , եւ եթէ առին՝ լաւ եւս , քանցի ճիշդ նոյն դրից եւ պայմանաց մէջ կը գտնուէր նաեւ Հայաստան , յորում կը գտնուէին միւս Արեւելեան եկեղեցիք . այս ինքն՝ եթէ նոքա մեծին կիւրղի զաւանգութիւնն ունէին , որում հաւատարիմ կ'ուզէին մնալ , Հայք եւս ունէին իրենց մեծին Սահակայ աւանգութիւնը , որում եւ ինքեանք կ'ուզէին հաւատարիմ մնալ . եւ եթէ նոքա ունէին զայն մեծ գծուարութիւնն , որ մօտակայ Նեստորականաց համաձայն պիտի գտնուէին ձի քննութեան տեղ՝ երկու քննութիւն ըսելով , ճիշդ մի եւ նոյն գծուարութեան մէջ էին նաեւ Հայք , գուցէ աւելի եւս , զի Նեստորականութիւնն ոչ միայն ի Միջագետս՝ իրենց ճիշդ գրքացի կից աշխարհին մէջ կեդրոնացած՝ զօրաւորագոյն մարմին մը կը կազմէր , այլ նաեւ ի Պարսս տարածուած էր , դարձեալ իրենց գրքակից (1) , — եւ ասոր վրայ կարեմք յաւելուլ նաեւ երկրորդ նման գծապատեհութիւն մը , պարսկական երկարաւստեան կամ երկու աւսուածութեանց կեղաք . — նա որ գծաղղաբար մուտ իսկ գտած էր յայն ժամանակս իրենց (Հայոց) սահմանաց մէջ , Հեռուսպէս այս ամեն խորհրդ-

(1) Գուցէ մասամբ եւ Հայոց սահմանաց մէջ : Ստեփ. Ուսպելեան կը յիշատակէ Ս. Գրիգոր Մանածիւր Դաժիկ անուն վանք մը նեստորականաց , ի Զ դարու . (Ս. Իբ) :

դածութեանց առջեւ յի՞նչ յանգած կրնայ ըլլալ ժողովոյն վճիռն , եթէ ոչ բացարձակ լուծութեամբ մը ծածկել խնդիրը , առանց աղմկի , առանց ինչ հակառակութեան , բնաւ ի հրապարակ չհանելով զայն ի լուր ժողովըրդեան , որ արդէն ունէր նա զիւր աւելի ծանր կրօնական խնդիրներ զբաղելու , եւ իրենք (Հայրապետք) դարձունել իրենց ուշադրութիւնը վերադարձնելու հօտին կարեւորագոյն խնամոց (1) : Կարծեմք այս էր եւ այս ըլլալու էր , ինչպէս բանական խելքը մեզ կը ցուցնէ , Հայոց վերաքննող ժողովոյն վճիռն , այնպէս որ ոչ այնչափ զարմանալի պիտի երեւէր մեզ մերժելն , որչափ զարմանալի ընդունելն : Եւ արդարեւ այդ ծածկութեան նշան կը համարիմք մէկ կողմանէ՝ ժամանակակից պատմաց (Փարպեցեոյն) եւ այլ ժամանակակից յիշատակարանաց բացարձակ լուծութիւնը այդ ժողովոյն մասին , եւ միւս կողմանէ՝ խաղաղ ներդաշնակութեան շարունակութիւնն ընդ Յոյնս : Որպէս եւ է , եթէ յայտնի մերժուած ըլլար կամ յայտնի ընդունուած , Բարգեւեանց յետոյ մերժումն եւ նորովք աւելորդ կ'ըլլային եւ կամ ոչ հեշտին , ինչպէս եղած են :

Սակայն այս խոհեմական խորհրդով ապահովեալ խաղաղութիւնն տեսցի ի Հայս , ցորչափ առտնին քաղաքական տագնապներ կային . բայց երբ սոքա փոքր ի շատէ իրենց հանդարտութիւնը գտան , սկսան տակաւ լսելի լինել այդ անդորրացեալ սահմանաց մէջ՝ արտաքին ալէկոծեալ ծովուն շառաչք , որ տակաւին դադրած չէին : Դժբաղդաբար անխուսափելի կ'ընէր եւ Հայոց այդ յուզմանց մասնակցիլ , քանի որ , բաց ի Փոքր Հայոց , նաեւ Մեծին Հայոց արեւմտեան կողմանք Բիւզանդական իշխանութեան ներքոյ ընկած էին , եւ սկսան ընկնիլ : Այն դարական անվասխճան վէճերուն մէջ , որոց նշանաւոր դուրս մը կը կազմէր այս Քաղկեդոնեան ժողովոյն խնդիրն , եւ ի սկզբան ընդ Յունաց էր , ապա եւ ազգայնոց մէջ մտաւ , ուրիշ բան չեմք նկատեր , բայց զայն ինչ որ առ այլ ազգս տեղի ունեցաւ , այն է՝ նախ բանաձեւի հակաձառութիւն (2) , ապա առ սակաւ սակաւ ի մոռացօնս դառնալով այդ բուն խընդրոյն իսկութիւնը , խնդիրն դարձաւ երկուստեք իրական վարդապետութեանց խտրութիւն դնել , — նկատումն կամ կարծիք , կ'ըսեմք , եւ ոչ

(1) Ուշադրութեան առնուելի պարագայ մի է , եթէ ստոյգ ըլլայ : Չամչեանի աւանդածն (Բ. 223) առնելով ի Գրիգորէ Տաթեւացեոյ , թէ Դիոսկորոս եւ նորա համախոհ կիւրեղականք , ինչպէս կ'նախկեցին եւ այլք , թղթեր գրած են առ Հայս :

(2) Նշանաւոր է առ այս Չամչեանի տեղ մը (Բ. 492) յառաջ բերած վկայութիւնն առնելով ի Պոզոսէ Տարօնացեոյ , թէ « Բարգեւն նորովեաց զասողոսն երկու բնութիւն ի Քս. , եւ կարգեաց մի բնութիւնն » . որ նշան մըն է որ այն առաջին ժամանակները նաեւ առ Հայս բանաձեւներու վրայ էր վէճը : Չամչեան կ'անհաւատի այս վկայութեան ստուգութեանը վրայ , այնու որ ձի քննութիւն բառն աստ՝ ոչ իբրեւ բանաձեւ կը նկատէ , ինչպէս մեք , այլ իբր Եւտիքեական մտաց բացատրութիւն մը , որ ուղիղ չէ :

ինչ աւելի : Այս թիւը նկատողութեան ծագումն տնտղն եւ սկզբնապատ-
ճառ եղաւ դարձեալ նաեւ Հայոց նկատմամբ այդ Եւսիփակն մակդրին
անհանճար ստեղծումն , զոր հնարեր էին Քաղկեդոնականք , եւ ապա
իրենք իսկ իրենց հնարեալ ստուծեան հաւտարով , զՀայս եւս, որ ըն-
քնոռքիւն կը դաւանէին , նոյն անուամբ մակադրեցին : Անգամ մը որ
այս կարծիք կամ մակդիր հիմնուեցաւ , ալ ասպարէզ բացուեցաւ այդ
Նւտիքական անուան՝ յարակից ուրիշ զարգարանաց անուններ ալ բար-
դեւու , ինչպէս Ապոդիւնարեան (1) , Յուդիսկեան , մինչեւ անգամ Աւ-
ստաւազարչարֆ . իսկ փոքր ինչ զգաստքն՝ Կես-Եւսիփակն կոչելով գո-
հացան , թէ եւ սա բնաւ իմաստ մը չունենայ : Սակայն այս գոյն գոյն
մականուանց համար զատ զատ ապացոյցք պէտք էին . սգէտ եւ գոռոզ
մոլեռանդութեան այդ եւս չէր պակսեր : Չէ՞ որ Հայք սարօրինակ կեր-
պիւ (թէ եւ հնաւանդ սովորութիւն) զՄնուենդն եւ զՄկրտութիւն ի մի-
ասին կը տօնեն , եւ կամ անապակ բաժակաւ կը պատարագին , ահա
յայտնի փաստք , որ ի Քրիստոս մի բնութիւն կը դաւանին ըստ Նւտի-
քէսի . — չէ՞ որ զՍք. Ած. ն որ խաչեցարով կ'երգեն , ահա շօշափելի
ապացոյց՝ որ զաստուածային բնութիւնն ի խաչ ելեալ կը դաւանին ըստ
Ապոդիւնարի (2) , — անտես ընելով սակայն այս վերջնոյն մէջ զայն
նշանաւոր պարագայն , որ երբ իրենք իրօք Նւտիքական անհանճար
եւ անմիտ վարդապետութիւն մը կը նկատեն այդ որ խաչեցարին մէջ ,
կը մոռանան իրենց ետին , որ իրենք եւս (Քաղկեդոնիկք) զՍ. Կոյսն
Աստուածածին կը դաւանին , ապշութեան մէջ թողով զՀայն , որ եթէ
կը ներուի Աստուած ձեւալ ըսել , ինչո՞ւ չներուի նաեւ Աստուած խա-
չեալ , ձեւեալ ըսել : Եւ զարմանալի , որ այս հակասական դատաստանք
կը տեւէ խտիւ մինչեւ ցայսօր՝ նաեւ ի կողմանէ Հռոմայ, որ վերջերս՝
հուսկ ուրեմն իբր շնորհք շնորհելով մեր Հռոմէական ազգայնոց որ կա-
րող ըլլան իրենց ազգային ծիսից փոքր ինչ աւելի մօտեցաւ , այդ ամե-
նէն անմեղ որ խաչեցարն արգիլեալ մնացած է , իբր Նւտիքականու-
թեան զարհուրելի ճիւղ (Բիզդ. Երրատիպ Ժամագիրք Հռոմէականաց ,
ի Վենետիկ . 1889) , — բայց առանց ուշադրութեան առնլոյ , որ այ-
նու կերպ մը իրաւունք արուած կ'ըլլայ Միքնութեանականաց ազօտ կաս-
կած մը ունենալու թէ երկբնութեանականքն իրօք գաղտ իմն միտումն
ունին դէպ ի նեստորականութեան խմորն :

(1) Լիբերատոս՝ սարկաւագն Ափրիկեցի (Քաղկեդոնական) ի 2 դա-
րու , յայտնի զայդ անունը կուտայ Հայոց . (Հաւնոս. Գլ. Ժ) :
(2) Բիզդ. Պալմեան , (տպ. Վեննա . 1878) էջ 18 , — որ եւ ինքն
հաւատացող կ'երեւի այդ կարծեաց , «հերձուածագիւտ յաւելուած» կո-
չելով զոր խաչեցարդ : Կ'երեւի որ ընդգէմ այսպիսի անգոսնողաց է ն
Տիեզերական ժողովոյն այս ժ կանոնը . «եթէ ոք ոչ խոստովանի զաէր
մեր Յս. Քս. , որ խաչեցաւ մարմնով , լինել Ած. ճշմարիտ եւ տէր փա-
ռաց եւ մի ի սրբոյ Երրորդութենէն , նզովեալ եղիցի» :

Վերջապէս այս անիրաւ , սուտ , սխալ դատաստանք , արգելմունք ,
յորջորջմունք , անշուշտ իրենց ընդդիմաբախումն (réaction) պիտի ըն-
դունէին անդուստ , ոչ միայն ատելութեան եւ թշնամութեան ոգի գըր-
դեւելով , այլ եւ յայտնի ցոյցերու ալ շարժելով . նախահարց մեղմ եւ լը-
ռիկ մերժման՝ յաջորդել յայտնարարառ մերժումն եւ նզովումն թէ Քաղ-
կեդոնեան ժողովոյն եւ թէ Լեւոնեան Տոմարին , — իբր սկզբնապատճառք
այդ իրենց կրած նախատանաց , — որք յիրաւի եթէ այլուստ անպարտ ըլ-
լային , բայց այն տեսութիւնն միայն , որ այդքան ատելութեանց եւ
եղբայրատեցութեանց առիթ եղան յընդհանուրս , խորշելի կ'ընծայուի
իրենց յիշատակը : — Իսկ այդ դարական մերժմանց , նզովից եւ ամե-
նադրի հակառակութեանց հանդէպ՝ զարմանալի չէ՞ նկատել որ Հայաս-
տանեայց եկեղեցւոյ հաւատոյ վարդապետութիւնն , արդարեւ Քրիստո-
սի խոստացեալ վրմին վրայ հաստատեալ , անըստգիւտ եւ անարատ մնա-
ցած է ցարդ , հաւատարիմ իւր նախկին եփեսոսեան վարդապետութեան
ամենայն մասամբ , որում կրնան վկայել , — քան զոր կարծեմք ան-
կասկածելի եւ անխարդախ վկայութիւն չկրնար ըլլալ , — այն այլ եւ
այլ Հաւատոյ դաւանութիւնները , որ երկար դարուց ընթացքին մէջ
յօրինեալ , այլ եւ այլ ատեն , այլ եւ այլ առիթ , զանազան անձինք-
ներէ , եթէ գիտնական եւ եթէ ոչ , եկեղեցական եւ կամ աշխարհա-
կան , ամենքն ալ ուղիղ վարդապետութիւն յայտարարած են . եւ այդ
մասին զարմանք զմեզ կը շարժէ , որ զՀայոց եկեղեցին՝ Եւսիփակն ,
հակաբաղկեդոնական , եւ վերջապէս՝ հերետիկոս անուանող բարեկամք ,
այդ նշանաւոր կէտին , որ կարծեմք՝ բաւական բան մը կը նշանակէ ,
բնաւ ոչ ուշ գրած են , եւ ոչ ըստ այնմ՝ չափ իրենց լեզուին (1) :

Ժամանեցինք հուսկ ուրեմն յաւարտ մեր բանից , յոր իբր քննա-
դատական ուսումնասիրութիւն պարագիցանք ըստ պատահման : Թէ երեւ-
ւակայական աշխարհի մէջ շրջապայած եղանք , զայն ընդդիմադիր պա-
տասխան մը միայն կրնայ յայտնել , Հանդերձ այսու , մեք մեզէն ոչ

(1) Գաթրճեան Հայրն յիւրում Հակոբակի հաւասոյ մատենին մէջ
(Վեննա, 1891) , այդ դաւանութիւններէն զմին ի մէջ բերելով , ի Շրեւ-
դերէ առեալ (Գաւնճ Արարեան ղեզուի) , եւ ուղղափառ վարդապետութեան
դէմ բան մը չգտնելով , բայց միայն մի քննարկեան բանաձեւին հետքը
(որ նշանական է) , զայս խորհրդածութիւնն կ'ընէ . «Այդ քրիստոնէա-
կան հաւատոյ դաւանութիւնը նոր ատենուան գործք է . այսինքն ժՒ դա-
րուն կէսերը Տաթեւացեաց զպրոցէն խմբագրուած , որոնք անհաշտելի
թշնամիք էին կաթողիկէ միութեան , եւ պաշտպան միաբնական մոլո-
րութեան բանիւ եւ գրով : Ան ձեւը «միաւորեալ մի բնութիւն» , ազ
գպրոցին նշանարանն է» . (էջ 41) : Յուսամք որ այսուհետեւ զկնի մեր
այս տեսութեանց , այդ ամեն եպերանք յօգս կ'ելնին :

առանց չըջանալեաց զգուշութեանց առինք մեր իւրաքանչիւր քայլերը՝
 եւ եթէ այդ երկչառութեան հետ՝ միանգամայն խրախոյս չպահսեցաւ
 մեզ այս նոր եւ անկոխ արահետին մէջ (1), այն էր որ մեր յառաջա-
 դէմ քայլերուն բնաւ խոչընդոտան չհանդիպեցաւ զմեզ կասեցունող կամ
 ընկրկող նա ընդհակառակն՝ մի եւ նոյն ժամանակ քննելով նաեւ ընդ-
 դիմադիր կողման, կամ հին կարծեաց պարագայները, նշմարեցինք
 տեսանք անոնց ճամբուն վրայ եղած ահագին փոփոխութիւնները, եւ զար-
 մանք եղաւ մեզ թէ ինչպիսի՞ կորովի արծուեղէն թեւօք օդաթռիչ կը-
 րեր անցեր են անոնց վրայէն:

Իսկ զի մեր այս աշխատութիւնը բուն նպատակ ունէր լուծումն
 տալ Միխրսրայ վարուց կենսագրին տարակուսանաց, դարձունելով առ
 նա ուրեմն մեր վերջին խօսքը, կը յուսամք կ'ըսեմք որ մեր էջերը
 կարգալով՝ այլ եւս հակասական չերեւիր թէ ինչպէս Հայաստանեայց
 Եկեղեցին ուղիղ վարդապետութեան մէջ ըլլալով, կրնար մերժած ըլ-
 լալ զՔաղկեդոն եւ զԼեւոն շատ օրինաւորապէս, եւ թէ այդ մերժումն
 ոչ քիւրիսնացութիւն էր ու ոչ սգիսնութիւն, այլ ճիշդ այն երբորդն, զոր
 ինքն Յարգ. կենսագրին խորշած է անուանելէ շատ ծանր բառ նկատե-
 լով, բայց մեք կրցանք կարգալ, եւ չեմք խորշիր անուանելէ, այն է
 յաւատարմութիւն. զի բնաւ ծանր չթուիր մեզ այդ բառը, եւ կարելի էր
 զայն համարձակ անուանել, միայն նորա ճշգրտոյն համանիչ բառովն,
 որ է Հաստատարութիւն, այս ինքն՝ այն ազգային ոգին, որ է պինդ,
 ամուր եւ հաւատարիմ մնալ եւ պահպանել կը սիրէ հայրենատուր աւան-
 դութիւնները, թէ եւ անոնց նշանակութիւնը երբեմն կորսուած ըլլայ:
 Ո՞չ այդ վեհ եւ գովելի ոգին է, որով ցարդ նոյն Ազգն պահպանած է
 ոչ զՄի բնութիւնն միայն, այլ շատ աւելի յարգելի հնութեանց հետ,
 նաեւ զանգինն՝ զիւր Քրիստոնէական կրօնքն, դիւցազնաբար, ժայռի
 պէս ամուր եւ անխախտ մնալով անշարժ՝ կատաղագոյն իսկ ալեաց եւ
 մրրկաց դէմ, Քրիստոնէական աշխարհին վերջին ծայր սահմանաց վրայ
 կալով՝ իբր պահանորդ զինուոր մը:



(1) «Թող կարգան անաշատութեամբ Հարնաքի, Լովսի, Վայցղէկէ-
 րի եւ այլոց հետազօտութիւնները, եւ այն ժամանակ կը համոզուին, թէ
 Հայք իրաւամբ ընդդիմացած են Քաղկեդոնի ժողովոյն», ըսած է Մուրճ,
 չեմք յիշեր ո՞ր թուականին: Մասամբ կը ցաւիմք որ մատչելի եղած
 չեն այդ մատեանք մեզ անձանօթք, կամ դուցէ ուրիշ ճանապարհաւ մի
 եւ նոյն եզրակացութեան կը հանդիպիմք, որ ստուգութեանց հզօր
 ապացոյցներէն մին է:

« Ազգային գրադարան



NL0071435

6766

28
7-34